Azg Ազգ

23 ՄԱՅԻՍ 2008 ՈՒՐԲԱԹ 98 (3992)

Ժիրայր Սեֆիլյանը աղաստան է խնդրում

ԼՂՀ նախագահ Բակո Սահակյանին ուղղված իր դիմումում ԼՂՀ ՊԲ Շուշիի առանձնակի գումարտակի եւ 6-րդ դաշտային ոստիկանական գրգռանի նախկին հրամանատար, դաշտային ոստիկան փոխգնդապետ Ժիրայր Սեֆիլյանը հաղթական աղաստան է խնդրել: Դիմումում մասնավորապես ասված է, «Հայաստանի Հանրապետությունում, սկսած առնվազն 2005-ից, իմ նկատմամբ ակնհայտ հաղթական հետաքննություն է իրականացվում: Այդ ընթացքում ինձ նախ՝ ձերբակալեցին անհիմն մեղադրանքներով, մասամբ առգրավեցին, մասամբ մեղավոր ճանաչեցին չկատարած հանցանքների համար: Անգամ դատարանում «հաստատված» մեղադրանքի համեմատ անհամաչափ պատիժ կիրառեցին: Հետո նույնիսկ անհիմն զրկեցին այդ «մեղմ» համարվող պատժից պայմանական վաղաժամ ազատվելու իրավունքից: Բացի այդ, նախորդ տարիներին ՀՀ նախագահը երկու անգամ փասատցի մերժեց ինձ ՀՀ հաղթաթղթություն տրամադրել, իսկ ոստիկանության համապատասխան մարմինները չդրամադրեցին մեծական կեցության իրավունք եւ հիմա էլ հրաժարվում են ընդունել իմ նույնաբովանդակ դիմումները: Այսօր էլ իմ նկատմամբ հաղթական հալածանքը տակավին շարունակվում է եւ դրա նոր արտահայտությունը ինձ Հայաստանից արտաքսելու նախապատրաստվող ծրագիրն է: Հայրենիքից հեռանալու հնարավորությունը ես ինձ համար բացառում եմ, ուստի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից հայցում եմ հաղթական աղաստան: Հուսով եմ, որ գոնե Արցախը ինձ չի մերժի»:

Սեւանից ջրառն այս տարի կկրկնապատկվի

Ոռոգման խնդի՞ր, թե՞ հզորների վիլլաները ջրից փրկելու լոբբիինգ

ՄԱՐԻՈՆԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Սեւանա լճից ջրի բացթողումների տարեկան առավելագույն քանակը սահմանված է մինչեւ 170 մլն խմ: Երեկ խորհրդարանում «Սեւանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման եւ օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» օրենքում լրացումներ եւ փոփոխություններ էին առաջարկվում կառավարության նախաձեռնությամբ, որի իմաստն այն է, որով Սեւանա լճից ջրի բացթողման տարեկան առավելագույն չափաքանակը 2008 թվականին սահմանվի մինչեւ 285 մլն խմ: Այս փոփոխությամբ Սեւանա լիճն այս տարի պակաս կբարձրանա 8-9 սմ-ով: Ջրի լրացուցիչ բացթողման պատճառն այսպես է հիմնավորվում, տեղումների անբավարարության պատճառով ոռոգման սեզոնը շուտ է սկսվել, դրացիոն ջրամբարներից ժամանակից շուտ ջրի բացթողումներ են եղել՝ Արարատի եւ Ազատի ջրամբարների լցվածությունը պակաս է, բացի այդ, եղանակային կանխատեսումները սպասվում են կառավարությանն այս միջոցով արդարացվել, ոռոգման խնդիրը լուծելիս: Հիշեցնենք, որ 2006-ին 151,6 մլն, 2007-ին՝ 151,3 մլն խմ ջուր է բաց թողնվել Սեւանից:

Օրենքի նախագիծը ԱԺ-ում ներկայացնում էր տարածքային կառավարման նախարարության ջրային տնտեսության գլխավոր կոմիտեի նախագահ **Անդրանիկ Անդրեասյանը**, որը եւ ավելացրեց, թե չնայած վերջին անձրեւներին, Հայաստանի ջրամբարները էլի կիսով չափ են լցված: Անցած տարիներին Սեւանից ջրառը կատարվում էր հունիսի 10-ից, մինչ այդ օգտվում էին բնական հոսքերից, որոնք մինչեւ այս վերջին անձրեւներն այս տարի նվազ էին, այնպես որ մինչեւ այժմ Սեւանից մոտ 40 մլն խմ ջուր արդեն եղել է, հատկապես ապրիլի 20-ից եւ մայիսին, մարտին եղած չոր եւ շոգ եղանակի պատճառով: Մինչեւ հունիսի 10 էլ 50 մլն խմ ջուր էլի բաց կթողնվի:

Տես էջ 3

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԵՍՈՒՄ

Ստեղծվելու են նախարարական կոմիտեներ

Վարչապետի որոշմամբ ստեղծվելու են 4 նախարարական կոմիտեներ՝ ֆինանսատնտեսական, սոցիալական, տարածքային զարգացման եւ բնապահպանական ու ոլորտային: Այս մասին երեկ, բացելով կառավարության նիստը, ասաց վարչապետ **Տիգրան Սարգսյանը**: Նա հայտնեց, որ «Անգլիայի կառավարությունը մեզ տեխնիկական օժանդակություն էր ցուցաբերում, եւ մենք ունենք մշակված համալիր ծրագիր, որը հիմնված է այդ առաջարկությունների վրա, թե ինչպես պետք է կատարելագործենք կառավարման համակարգը: Գաղտիք չէ, որ մեր բոլոր բարեփոխությունների հաջողությունը պայմանավորված է լինելու նրանով, թե որքանով է արդյունավետ աշխատում մեր կառավարման համակարգը»: Ըստ նրա, բոլոր այն հարցերը, որոնք քննարկվում են կառավարության նիստում, ինչպես նաեւ բոլոր հայեցակարգային խնդիրները, որոնք առնչվում են այս կամ այն նախարարությանը, նախապես պետք է քննարկվեն այդ կոմիտեներում: «Եթե մենք ուզում ենք ապահովել որոշես թիմ, չպետք է լինեն խնդիրներ, որոնք վերաբերում են միայն մեկ գերատեսչությանը՝ դա պետք է լինի մեր բոլորի խնդիրը, եւ մենք համատեղ պետք է քննարկումներ կազմակերպենք, գտնենք լուծումներ», նշեց վարչապետը, ավելացնելով, որ անգլիական գործընկերների առաջարկությունները էապես կբարելավեն մեր կառավարման համակարգը: «Այստեղ, ամեն ուրբաթ դուք բոլորդ պետք է պլանավորեք, որ անց ենք կացնելու նախարարական կոմիտեների նիստեր», նախարարներին հայտնեց Տիգրան Սարգսյանը:

Ա. Մ.

Հայ աղամանդագործները եւ ոսկեգործները դարձան IDMA-ի անդամ

Աղամանդ արտադրողների միջազգային ասոցիացիայի (IDMA) օրերս Շանհայում անցկացրած միջազգային կոնգրեսում, ոլորտին վերաբերող հարցերից բացի, քննարկվել եւ դրական լուծում է տրվել Հայաստանի ոսկեգործների եւ աղամանդագործների ասոցիացիայի՝ IDMA-ին անդամակցելու հարցին: Հեղինակավոր այս կազմակերպությանն անդամակցում են ԱՄՆ-ը, Կանադան, Հնդկաստանը, Չինաստանը, Իսրայելը, Բելգիան, Հոլանդիան, Ռուսաստանը: Ըստ Ամենայնի, անդամակցելով միջազգային այս ասոցիացիային՝ Հայաստանի աղամանդ արտադրողները կդառնան միջազգային աղամանդային շուկայի լիիրավ մասնակիցներ: Հայկական ասոցիացիայի անդամակցությունը երաշխավորել է Աղամանդ արտադրողների ռուսական ասոցիացիան: Հայաստանի ոսկեգործների եւ աղամանդագործների ասոցիացիան ոլորտի առաջատարներից է, որի կազմում կան 20 ձեռնարկություններ, մասնավոր ձեռներեցներ:

Կիլոռոսում հեռաձգվում է Մեծ եղեռնի հուշարձանի բացումը

Մայիսի 3-ին «Ազգը» տեղեկացրել էր, որ Կիլոռոսի առափնյա Լառնակա քաղաքում կկանգնեցվի Մեծ եղեռնի հուշարձան, որի հունիսին նախատեսվող բացմանը նախագահ Սերժ Սարգսյանի գլխավորությամբ կմասնակցի նաեւ Հայաստանի ղեկավարությունը: Ի դեմ, Լառնակայում Մեծ եղեռնի հուշարձան կանգնեցնելու որոշումն ընդունել էր քաղաքաթեատրանը, իսկ Կիլոռոսի խորհրդարանն ու կառավարությունը միաձայն հաստատել էին:

Տեղեկության համար հիմք էր ծառայել թուրքական մամուլը, որն իր հերթին հենվել էր կիպրական «Ֆիլիեֆտերոս» թերթի վրա: Մայիսի 22-ին նույն մամուլը «Ցիաջողվեց կասարել, այսպես կոչված, Հայոց ցեղասպանության հուշարձանի բացումը» ընդհանուր վերնագրով նշել է, որ բացման արարողությունը հետաձգվել է, ինչի մասին հայտարարել են Կիլոռոսի իշխանությունները:

Անկախ վերջինների պատճառաբանությունից, թե հուշարձանը դեռեւս վերջնական տեսքի չի բերվել, իսկ բացման համար նախապատրաստությունները շարունակում են ձգձգվել, այնուամենայնիվ, Կիլոռոսի Հանրապետության նախագահ Դիմիտրիս Խրիստոֆիասը եւ թուրքական հաւանթի առաջնորդ Մեհմեդ Ալի Թալաթը բանակցային գործընթաց են սկսում, որի շրջանակներում նրանց առաջին հանդիպումը կկայանա այսօր:

Հ. Ծ.

Ծառայողական խնդիր անցկացնելու առաջարկ

Մարդու իրավունքի պատգամավորի գրասենյակից հաղորդում են, որ մայիսի 6-ին հաղթաթղթի Կարեն Հեֆիմյանը մարդու իրավունքների պատգամավորին ուղղված դիմումով հայտնել է, որ 2008-ի մայիսի 5-ի առավոտյան իր բնակարան են ներխուժել ոստիկանության երեք աշխատակից եւ բռնի ուժով տարել ոստիկանության Շենգավիթի բաժին: Ըստ հաղթաթղթի՝ այնտեղ նրան արգելել են օգտվել հեռախոսից, փաստաբանական ծառայությունից: Դիմումատուն նաեւ հայտնել է, որ ոստիկանության Շենգավիթի բաժնում տուրք յոթ ժամ պահելուց հետո ոստիկանության աշխատակիցները նրան ազատ են արձակել: Քաղաքացուն յոթ ժամ պահելու փաստը հիմնավորել է նրա տահերի պատգամավոր Արմեն Հարությունյանի հանձնարարությամբ, աշխատանքային խումբը այցելել է ոստիկանության Շենգավիթի բաժին: Վերջիններս ոստիկանության բաժնում ուսումնասիրել են «Ոստիկանության մարմին բերման ենթարկվածների հաշվառման» գիրքը եւ պարզել, որ Կարեն Հեֆիմյանը նշված մայանում գրանցված չէ: Արմեն Հարությունյանը պատգամավորական գրությամբ ՀՀ ոստիկանության պետ Հ. Հարությունյանին առաջարկել է հանձնարարել ծառայողական քննություն անցկացնել եւ իրավախախտում հայտնաբերելու դեպքում միջոցներ ձեռնարկել մեղավոր անձանց օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու համար:

Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Արդի հայ երաժշտարվեստի աղաղակող աղավաղումներն ու դրանց հետեւանքները՝ գրականագետ Յուրի Խաչատրյանի «Ստորության տիպը» հոդվածում: Նույն հեղինակի թարգմանությամբ ժամանակակից ռուսական երաժշտարվեստի համանման պատկեր, ըստ Նինա Զիգադաեւայի (Սանկտ Պետերբուրգ): Խոսքի գրեթկաբանության արդի դրսեւորումները կենցաղային մակարդակներից մինչեւ մամուլ, եթեր, արվեստ, մասնավորապես երգարվեստ՝ Լեւոն Սարգսյանի «Սպասվող պատվախնդրությունը» հոդվածում: Մշակութային մեր ինքնության կորուստների եւ համանման այլ երեւույթների մասին զրույց Դանիել Երաժիշտի հետ: Գրիգոր Ամեջյանի «Սի ֆանի խոսքը»՝ 37-ականների շուրջը ծավալվող բանավեճի առիթով: Արխիվային հրապարակում՝ Նաիրի Զարյանի մասնագիտ Աղասի խանջյանին: Տեղեկություն Լեւ Կամսարի նորընծա «Մահապուրծ օրագիր» (1925-1939) ժողովածուի մասին: «Գրքերի տեսության» խորագիրը շարունակում է Հայկա Սարիբեկյանը: Լուսեր արվեստի աշխարհից:

«Սալինյան ճշմարտությունը» Սասկաշվիլու Վրաստանում

Ազգային փոքրամասնություններ «սիրահարվա՞ծ» են իշխող կուսակցությանը

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Թբիլիսի

Կարեւոր չէ, թե ինչպես են խնդարկում, այլ թե ինչպես են հաշվում: Այս խոսքերը հեղինակել է «Մեծն» Սալինը, ու ցավոք դեռ երկար ժամանակ ոմիսի հրում արվի նման արտահայտությանը, ճանի որ մեր իրականությունը, ինչպես եւ հարեւան Վրաստանի, ընտրական գործընթացների առնչությամբ հեռու չի գնացել: Վստահաբար չի կարելի ասվածը ոմնել որոշ Վրաստանի համար, բայց որ դա իրականություն է ազգային փոքրամասնությունների ոլորտակ բնակության շրջաններում՝ փաստում են նույն պատգամավորական, թեկուզ եւ նախնական տվյալները: Հիշեցնենք, որ մասնավորապես հայաբնակ շրջաններում թեեւ մասնակցության պատգամավորական նախնական տվյալն ավելի հան 45 տոկոս է եղել, բայց, «Ազգի» տվյալներով, խնդարկությանը մարդկանց մասնակցությունը առավել հան պասիվ է եղել:

Ըստ վաղ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի երեկ հրապարակած նախնական տվյալների, հայաբնակ Սամցխե-Ջավախքեթի տարածաշրջանի Ախալքալաքի շրջանում ընտրության մասնակիցների 91,99 տոկոսը «խնդարկել» է իշխող կուսակցության՝ «Միացյալ ազգային շարժման» օգտին, իսկ միացյալ ընդդիմությունը ստացել է ձայների 0.83 տոկոսը: Նինոծմինդայի շրջանում իշխող կուսակցությունը ստացել է ձայների 89,28 տոկոսը՝ միացյալ ընդդիմության 1,63 տոկոսի հարաբերակցությամբ: Քվեմո Քարթլիի տարածաշրջանի մեջ մտնող հայաբնակ Ծալկայի շրջանում իշխանությունը ստացել է ընտրողների 71,3 տոկոսի աջակցությունը, իսկ միացյալ ընդդիմությունը՝ 15,85:

Այս երեք շրջաններում էլ ընդդիմադիր կուսակցությունները չունեին մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներ: «Ազգն» արդեն տեղեկացրել է, որ Ծալկայում առաջադրված Հայկ Մելքոնյանի թեկնածությունը ընդդիմադիր դաշինքը հանել էր դեռեւս մայիսի 6-ին:

Պատկերն, ըստ ԿԸՀ-ի, ինչ սարքեր է եղել ադրբեջանաբնակ շրջաններում, թեեւ լիուլի տեղավորվում է «սալինյան ճշմարտության» տրամաբանության մեջ: Մասնավորապես, ադրբեջանաբնակ Մառնեուլի շրջանում իշխող կուսակցության համար, ԿԸՀ հրապարակած նախնական տվյալներով, խնդարկել է ընտրողների 82,39 տոկոսը՝ ընդդիմության օգտին տրված 6,88 տոկոսի դիմաց: Գադաբանի շրջանում Միացյալ ազգային շարժումը ստացել է 69,98 տոկոս, երբ ընդդիմության մասին տվյալը կազմում է 9,83 տոկոս: Ադրբեջանաբնակ Բոլնիսի շրջանում, որտեղ կան նաեւ հայկական գյուղեր, իշխանության կուսակցությունը ստացել է ձայների 75,3 տոկոսը, միացյալ ընդդիմությունը՝ 8,85:

Տես էջ 5

«Կբացառվի թղթի վրա մնացող օրենքների ընդունումը»

Կառավարությունը ներդնում է «ներազդեցության գնահատում» կոչվող ինստիտուտը

Օրենքների ու որոշումների ընդունումն այսուհետև անհնար կլինի, եթե անցած չլինեն «ներազդեցության գնահատում»: Այս նոր ինստիտուտի ներդրման մասին երեկ կառավարության ընդունած որոշումը լրագրողներին ներկայացրեց ադարադության նախարար **Գեւորգ Դանիելյանը**: Նա հայտնեց, որ յուրաքանչյուր մարմին, որ կնախաձեռնի իրավական ակտի մշակում, պետք է ոչ միայն իրավաբանական եզրակացություն ստանա, այլեւ եւս 8 եզրակացություններ այդ փաստաթղթի սոցիալական, կոռուպցիոն, բնապահպանական եւ այլ դրական ու բացասական հետեւանքների մասին: Սա վերաբերում է նաեւ պետական մարմինների ներկայացրած օրենքի նախագծերին: Եզրակացության մեջ պետք է նաեւ նշվի, թե ինչ ժամկետներում հնարավոր են այս դրական կամ բացասական հետեւանքները: Եզրակացություն տալու համար սահմանվելու է 15-օրյա ժամկետ՝ այնքան, որքան անհրաժեշտ է նախարարություններին ներկայացնում միայն կարճիք ներկայացնելու համար:

Միաժամանակ արդարադատության նախարարը նշեց, որ եթե որեւէ նախագիծ ունենալու է որոշակի բացասական հետեւանքներ, բայց դրական հետեւանքները գերակշռելու են, չի նշանակում, թե կառավարությունը հրաժարվելու է այն հաստատելուց:

Ներազդեցության գնահատման ինստիտուտը ներդնելով, Գեւորգ Դանիելյանի հավաստմամբ, հետագայում կբացառվի չափազանց, թղթի վրա մնացող իրավական ակտերի ընդունումը եւ նախապես հաշվի կառնվեն յուրաքանչյուր իրավական ակտի սոցիալական, իրավական, բնապահպանական եւ այլ հետեւանքները:

«Ազգի» հարցին, թե ավելի ճիշտ եւ անկողմնակալ չի՞ լինի, եթե այդ եզրակացությունները տան ոչ միայն նախարարությունները, այլեւ անկախ կամ միջազգային կազմակերպությունները, Գեւորգ Դանիելյանը պատասխանեց, որ մենք մյուսին չի խանգարում, եւ եթե նախարարությունը կողմնակալ եզրակացություն տա, արդեն իր համար է խնդիրներ ստեղծելու:

«Իսկ սխալ եզրակացության դեպքում ինչ պատասխանատվության է ենթարկվում դրա հեղինակը», մեր մյուս հարցին նախարարը պատասխանեց, որ դա պայմանավորված կլինի կոնկրետ իրավիճակով: Եթե օբյեկտիվ տվյալների հիման վրա է այդ եզրակացությունը տրված, արդեն պատասխանատվության չի ենթարկվի ոչ ոք, իսկ եթե տվել է անձնական կամ այլ շահերից ելնելով, արդեն կարող է լինել ընդհուպ քրեական պատասխանատվություն:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Տիգրան Սարգսյան. «Այն ավանդույթները, որ ձեւավորվել են, ավելի շատ խթանում են դեղին մամուլի զարգացումը»

Կառավարության երեկվա նիստում վարչապետ Տիգրան Սարգսյանն անդրադարձել է զանգվածային լրատվամիջոցների հետ կառավարության աշխատանքին: «Միջազգային փորձի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մենք ունենք ԶԼՄ-ների հետ շփվելու լրջագույն որոշումներ եւ խիստ բացասական ավանդույթներ, որոնց վերջ պետք է տանք», խոսեցավ նա: Դրա համար վարչապետը նախ դիմեց ԶԼՄ-ներին, առաջարկելով ներկայացնել իրենց մոտեցումներն ու առաջարկությունները կառավարության եւ նախարարությունների հետ համագործակցության վերաբերյալ: Տեղեկացվեց նաեւ, որ կառավարությունը եվրոպացի գործընկերներից տեխնիկական օժանդակություն է ստանալու, որպեսզի «էթիկայի կանոններ ներդրվեն այս ոլորտում», որոնք բոլորի համար հասկանալի եւ հասկանալի կլինեն:

«Երբ ԶԼՄ-ների ներկայացուցիչները դիմում են այս կամ այն նախարարին ինչ-ինչ հարցերով եւ չեն ստանում այդ հարցերի պատասխանը, նրանք անմիջապես հայտարարում են, որ այդ նախարարությունը թափանցիկ չի աշխատում: Սա բացարձակապես կապ չունի թափանցիկ աշխատելու հետ: Եվ այն ավանդույթները, որ ձեւավորվել են, ավելի շատ խթանում են դեղին մամուլի զարգացումը Հայաստանում, իսկ լուրջ վերլուծական նյութերով հանդես եկող լուրջ լրատվական միջոցները չեն հայտնվում մեր ուշադրության կենտրոնում եւ դրանով իսկ մենք չենք խթանում հենց նրանց զարգացումը: Դրա համար, կարծում եմ, այդ հայեցակարգի մշակումը կարող է նաեւ խթանել բարոյահոգեբանական մթնոլորտի առողջացումը Հայաստանում: Գաղտնիք այն է, որ մենք պետք է սկսենք մեզանից՝ մենք ինչպե՞ս ենք պատկերացնում թափանցիկ աշխատանքը ԶԼՄ-ների հետ, ինչպիսի՞ տեղեկատվություն ենք պարտավոր պարբերաբար նրանց տրամադրել, ինչ ընթացակարգերով ենք պատասխանելու նրանց հարցերին, ո՞ր հարցերը պետք է դառնան հրապարակային քննարկման եւ որո՞նք ծառայողական քննության առարկա», ասաց վարչապետը:

Ա. Մ.

Ժամադրավայրը՝ կառավարության առջեւ

Եվ կրկին Թեղուտի մասին

Հաշվի առնելով, որ ամեն հինգշաբթի կառավարության նիստն է, երկրից, իշխանություններից դժգոհություն ունեցողները հավաքվում են կառավարության տեսնի առջեւ: Չենք պնդում, թե դժգոհելու բան չկա մեր երկրում. կա, այն էլ, ինչպես ուզես, բայց կառավարության առջեւ կազմակերպվող խոնջիկական բողոքի ակցիաներն արդեն վաղուց հոգեմաշ են դարձել: Երեկվա բողոքի ակցիան կազմակերպել էր Թեղուտի պաշտպանության շարժումը՝ կենսաբազմազանության միջազգային օրվա առիթն օգտագործելով եւս մեկ անգամ իր դժգոհությունը տեղ հասցնելու համար: Թեղուտի հանքավայրի շահագործման իրողությունից դժգոհողների կողքին կառավարության առջեւ հավաքվել էին տարբեր դժգոհություններ ունեցող մյուս խմբերը՝ Դալմայի այգիների, սեփականության խնդիրներ ունեցող երեւանի կենտրոնական փողոցների բնակիչները: Ու բոլորն իրար հետ զրուցում էին իրենց խնդիրների մասին. տեսնես նրանցից մեկը հավատո՞ւմ էր, որ այդկերպ իրենց ասելիքը տեղ կհասնի:

Վերադառնանք Թեղուտին: Ամենաշատը 20 հոգի, որոնք Թեղուտի պաշտպանության խմբի անդամներն էին, տարբեր կենդանիների պատկերներով թղթե դիմակներով, տարատեսակ պաստառներով հավաքվել էին կառավարության առջեւ՝ կրկին բարձրաձայնելով իրենց դժգոհությունները: Թեղուտի պաշտպանության խմբի անդամների պահանջներին եւ առհասարակ այդ հարցին մեր թերթն անդրադարձել է բազմիցս, այնպես որ շատ չենք մանրամասնում: Հիշեցնենք միայն, որ պաշտպանության խումբը պահանջում է անհապաղ դադարեցնել Թեղուտի շահագործման ծրագիրը, Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրի տարածքում սկսված անտառահատումներն ու մյուս աշխատանքները, վերանայել հանքավայրի շահագործման վերաբերյալ կառավարության որոշումը, կասեցնել նոր հանքավայրերի հետազոտման ու արդյունահանման բոլոր գործողությունները, մշակել եւ ընդունել ընդերօգտագործման կայուն եւ ռացիոնալ ծրագիր:

Թեղուտի հանքավայրի շահագործման թույլտվություն ստացած «Ամինիան ֆափը փրոդաքշն» ընկերության ղեկավարությունն ավելի քան մեկ ամիս առաջ ACP բնապահպանական ՀԿ-ներին է ներկայացրել Թեղուտի լեռնահարստացուցիչ կոմբինատի եւ պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման իր իսկ մշակած ծավալուն փաստաթուղթը: Նախօրեին հանքավայրի շահագործման վերաբերյալ հրավիրված քննարկմանը պարզ է դարձել, որ ընկերության ներկայացրած նախագծի վերաբերյալ որեւէ առաջարկություն չի ստացվել: Այսինքն, մարդկանց եւ կազմակերպություններին հնարավորություն է տրվել իրենց դիտարկումները՝ դեմ կամ կողմ տեսակետները հայտնելու, բայց որեւէ մեկը ասելիք չի ունեցել: Առիթի դեպքում առաջարկ չներկայացնելու պարագայում ինչպե՞ս հասկանալ կառավարության առջեւ հանրային բողոքի դրսեւորումը:

ԳՈՌՇԻՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ,

ԿՐԹԱՊՈՇԱԿԱԿԻՐԵՐ

Հայաստանը, Ադրբեջանն ու Վրաստանը մի սեղանի շուրջը Բեռլինում

Մայիսի 9-ին Գերմանիայի Բունդեսթագի Հարավկովկասյան խորհրդարանական խմբի նախաձեռնությամբ Բեռլինում առաջին անգամ տեղի է ունեցել պատգամավորների հանդիպում երեք երկրների դեսպանների եւ Բունդեսթագում աշխատող հայ, վրացի եւ ադրբեջանցի կրթաբոլորակիրների հետ: Մտքերի փոխանակման ընթացքում համատեղ ծրագրեր իրականացնելու առաջարկություններ են արվել: Ներկայումս Հարավային Կովկասից 16 կրթաբոլորակիրներ են աշխատում Բունդեսթագի պատգամավորների գրասենյակներում: Միջազգային խորհրդարանական կրթաթոշակի շրջանակում Հայաստանն ու Ադրբեջանը այսուհետեւ ամեն տարի մասնակիցներ կուղարկեն Գերմանիա:

Պատգամավորական խմբի նախագահ պարոն Շտեֆեն Ռայխենը ընդգծել է, որ կրթաթոշակակիրների համատեղ ջանքերն ու նախագծերը պետք է պարբերական լինեն, ինչը հնարավոր կդարձնի երկխոսությունը հակամարտությունների լուծման եւ Հարավային Կովկասում տարածաշրջանային ինտեգրացիան խորացնելու համար: Ըստ նրա՝ երեք երկրները տարբեր չափով են օգտագործում եվրոմիության հարեւանության ծրագիրը՝ սեփական տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներն առաջ տանելու նպատակով:

ՎԱՀԵՐԱՐ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ,

Գերմանիա

ՀԱՄԱՌՈՏ

Ռոբերտ Քոչարյանը թոշակ կստանա

Կառավարության երեկ ընդունված որոշմամբ ՀՀ երկրորդ նախագահ Ռոբերտ Քոչարյանը ցմահ թոշակ կստանա՝ իր աշխատավարձի 80 տոկոսի չափով: Միաժամանակ պետգույքի վարչությունը պետք է առաջարկ ներկայացնի սահմանված կարգով պետական բյուջեից Ռոբերտ Քոչարյանին բնակարանով ապահովելու համար գումար հատկացնելու մասին:

Էդգար Մանուշարյանին տարկետում տվեց

Հայաստանի ֆուտբոլի ազգային հավաքականի հարձակվող Էդգար Մանուշարյանին երեկ կառավարությունը իսկական զինվորական ծառայությունից տարկետման հնարավորություն տվեց:

Ա. Մ.

Նոր հայկական դպրոց Գլենդեյլում

Ըստ «Նոյյան տապանի», Գլենդեյլում առաջիկայում կկառուցվի հայկական միջնակարգ դպրոց: Այս նպատակով հայ համայնքին 6 մլն ԱՄՆ դոլար է հատկացրել հայ բարեգործ Ռաֆֆի Մանուկյանը, հաղորդում է «Կիլիկիա» հեռուստաընկերությունը:

Պատժաչափը 1 տարով կրճատվեց

Վերաքննիչ դատարանից հաղորդում են, որ Մարաիկ քաղաքի 36/34 ընտրական տեղամասում նախագահի նախկին թեկնածու Լեւոն Տեր-Պետրոսյանի վստահված անձ Հարություն Ուռուսյանը դատապարտվեց 6 տարվա ազատազրկման: Մեկ տարով կրճատվեց հյուսիսային հրեական դատարանի մարտի 12-ի դատավճռով նշանակված պատժաչափը: Հիշեցնենք, որ Հ. Ուռուսյանը մեղավոր էր ճանաչվել հրեական օրենսգրքի «Ընտրական իրավունքի իրականացմանը, ընտրական հանձնաժողովների աշխատանքներին կամ ընտրությանը մասնակցող անձանց լիազորությունների իրականացմանը խոչընդոտելը» հոդվածով եւ 112-րդ հոդվածի «Դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը» մասով նախատեսված արարքները կատարելու մեջ եւ դատապարտվել 7 տարվա ազատազրկման:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության մէջ է արդի
Պիտնարդ եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010 Հայրապետյան 47
Ֆաքս՝ 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՀԱՎԵՐ ԱՐԵՒԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՀԱՅՐԻԵԱՆ / հեռ. 529221
Հաշուապահութիւն (գրասենեակ) / հեռ. 582960
Լրագրողների սենեակ / հեռ. 581841
Հանձնարարական բաժանորդագրութիւն / հեռ. 582483
Շուտբերեալ լրահամար ծառայութիւն / հեռ. 529353
Հանձնարարական բաժանորդագրութիւն «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտադրումները տրամիր ծանուցի միջոցով կամ ռադիոհեռատեսութեամբ առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խիստի արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
Գ սառով յոդուածները գրաւոր են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Հայագիտությանը նվիրաբերած արեւշատությամբ լի մի ամբողջ կյանք

Հայ միջնադարյան հոգեւոր արժեքներն ամենայն սիրով ոգեւորելու, ուսումնասիրելու, թարգմանելու եւ աշխարհով մեկ սփռելու լուսավոր ձգտումը նրա հոգում արթնացավ պատանեկան հասակից, տարիների հետ ամրացավ, զորացավ, դառնալով գոյության իմաստ ու բովանդակություն: Քանի դեռ երիտասարդ էր, իր այլին 70-ամյա մարդիկ շատ մեծ էին թվում, ու մտածում էր, թե կհասնի՞ այդ տարիքին: Հիմա այդ տարիքը գերազանցել եւ նեռում է 80-ամյակը, այն էլ՝ փառավոր մթնոլորտում, շրջապատված դասընկերներով, համակուրսեցիներով, գիտության ու մշակույթի նվիրյալներով:

«Եթե բնությունը եւ բարձրյալը կամենան, կարելի է շարունակել կիսաս գործերը, ավարտին հասցնել, հրատարակել եւ 2 տասնամյակ ծանր վիճակում հայենված հայագիտությունը դուրս բերել լայն ասպարեզ: Այնքան դժվարություններ եմ դիմացել, հաղթահարել եմ 90-ականների ցուրտն ու մութը: Կարծում եմ, այն փոփոխությունները, որ կատարվում են մեր երկրում, հույս են ներշնչում, որ բավ է միայն քաղաքականության հետեւից ընկնել, ժամանակն է հայագիտության վրա հատուկ ուշադրություն դարձնել: Ակադեմիայի տարեկան ժողովում այդպիսի լիցքեր ստացանք: Հիմա հնարավորությունները շատացել են ու դեռ շատանալու են: Այսօր այստեղ ներկա են գիտական հասարակության լավագույն ներկայացուցիչները, որոնց առաջ խոսանում եմ կյանքիս մնացած տարիներին աշխատել նույն նվիրումով եւ ավարտել կիսաս գործերս: Կցանկանայի, որ մեր երիտասարդ գիտաշխատողները ոչ միայն պարծենան Մատենադարանի անունով, այլեւ կարողանան ուսումնասիրել, թարգմանել ու տարածել մեր միջնադարյան գանձերը: Շատ եմ ուզում, որ 10 տարի անց այս նույն կազմով նորից հավաքվենք այստեղ», ասաց ակադեմիկոս **Սեն Արեւշատյանը**, որի 80-ամյակը երեկ նշվեց ԳԱ ազգային ակադեմիայում:

Խորամուխ լինելով հայոց հին եւ միջնադարյան փիլիսոփայական մտքի պատմության մեջ, Արեւշատյանը գիտական շրջանառության մեջ է դրել համարձակ փաստարկներ, վեր է հանել միջնադարյան փիլիսոփայության ազդեցության տարածական ոլորտները, հրատարակել բազմաթիվ աշխատություններ, թարգմանություններ:

Նրա մարդկային վեհ նկարագրի ու գիտական բեղուն գործունեության մասին խոսք ասողներն այնքան շատ էին, որ պարզապես անհնար է բոլորին անդրադառնալը:

Մատենադարանի տնօրեն **Հրաչյա Թամրազյան**. «Մատենադարանի առաջին տնօրեն Լեւոն Խալիկյանի կամոք եւ ցանկությամբ նա սահմանեց այդ օջախի ղեկավարությունը, քառորդ դար ղեկավարելով ու յուրովի շարունակելով իր մեծ նախորդի գործը: Նրա օրոք Մատենադարանում հրատարակվել են հայրենավոր ուսումնասիրություններ եւ մենագրություններ, զգալիորեն համալրվել են ձեռագրատան, գրադարանային եւ արխիվային ֆոնդերը: Մատենադարանի ձեռագրատան հավաքածուն հարստացել է մոտ հազար ձեռագրով, որ պակառելի թիվ է: Նրա ղեկավարման տարիներին, հատկապես 90-ականներին Մատենադարանն անցնում հարթահարեց բոլոր դժվարությունները: Նրա անելիքները շատ են նաեւ Մատենադարանի նոր ծրագրերի իրագործման ասպարեզում, հատկապես նոր սերունդ կրթելու գործում, քանի որ Մատենադարանի սերնդափոխությունը ընթացքի մեջ է եւ մեծ նշանակություն ունի ավագների կենսափորձի փոխանցումը, որ հնարավոր է տեւական հոգեւոր ջիգան, գիտական կենդանի երկխոսության միջոցով»:

ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆ. **Նիկոլայ Հովհաննիսյան**. «Շատ դժվար է մեծերով հարուս հայագիտության անդասանում ունենալ իր սեփական տեղը, դա Ձեր երկային կյանքի ամենամեծ նվաճումն է: Ինչ էլ որ խոսեմ, Ձեր անունը կապված է Մատենադարանի հետ, այն Ձեզ համար դարձավ հեղինակություն ստեղծելու հուսալի հենարան, իսկ Դուք այդ հենարանի վրա հույսեր դրեք բերելով, նպաստեցիք Մատենադարանի անվան տարածմանն ու մեծարմանը: Այստեղ Դուք հանդես եք գալիս մեր ձեռի տված եւ դրա արգասաբեր արդյունքները ընդունելի են բոլորի համար՝ Հայաստանում թե արտասահմանում»:

Ակադեմիկոս **Գեւորգ Բրուտյան**. «Ձեզանից ավելի տարեց լինելով վկա եմ եղել որ անցած ուղին, հիացել եմ ելեզնով, որ ուսումնասիրություններով, մարդկային հատկություններով եւ այսօր առավել ես ուրախ եմ, որ դու հերթում ես այն թեզը, որ 80 տարին շատ է: Ենթադրում եմ, որ եթե մինչեւ հիմա ստեղծագործում էիր, որպիսեսեւ կարողանում էիր, արա սրանից հետո պիտի ստեղծագործես, որպիսեսեւ չես կարող առանց դրա»:

Սարգիս Հարությունյան. «Մեր փիլիսոփայական մտքի լավագույն ներկայացուցիչներից է Սենը, եւ այսօրվա ամբողջ գեղեցկությունն այն է, որ մեր 80-ամյա պատանուն տեսնում ենք ջահել, հաճելի, հմայիչ: Սենին նայում ու հիանում եմ, որովհետեւ ինքն էն գլխից մտավորական է, բարձր մակարդակով: Ծնվել է իսկական մտավորականի ընտանիքում, նաեւ ընտանիք է կազմել միջնադարյան գրականության մասնագետ, գիտությունների դոկտոր Ջնարիկ Տեր-Դավթյանի հետ, միջնադարագետ է նաեւ դուստրը՝ երաժշտագիտության դոկտոր Անանա Արեւշատյանը, այսինքն՝ մի ամբողջ գիտական գերդասան է: Սենի ազգանվան մեջ արդեն բարեմաղթություն կա, մենք էլ նրան մաղթենք արեւշատություն եւ երկար տարիների կյանք»:

Շնորհավորանքի խոսքեր ասացին նաեւ ԳԱԱ նախագահ **Ռաֆիկ Մարտիրոսյանը**, ակադեմիկոս **Վլադիմիր Բարխուդարյանը**, ԳԱԱ փիլիսոփայության եւ սոցիոլոգիայի ինստիտուտի տնօրեն **Գեւորգ Պողոսյանը**, Ազգագրության եւ հնագիտության ինստիտուտի տնօրեն **Պավել Ավետիսյանը**, ԵՊՀ ռեկտոր **Արամ Սիմոնյանը** եւ ուրիշներ: Վերջինս հոբելյարին հանձնեց մայր բուհի ոսկե մեդալը, իսկ Արտեմ Սարգսյանը Ռաֆայել Օհանջանյանի անունից փոխանցեց Գյոթեի medանը:

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

Պարզվել է, թե որտեղ է ընդդիմությունը պատրաստել մեսաղական կոնստրուկցիաները՝ «ոգնիները»

Պարզվել է, թե որտեղ եւ ում պատվերով են պատրաստվել հեղափոխական իրադարձությունների ժամանակ հայտնաբերված մեսաղական կոնստրուկցիաները կամ այսպես կոչված «ոգնիները», որոնք ըստ այդ օրերին հրապարակված տեղեկությունների, մարմնական վնասվածքներ պատճառելու համար էին բաշխվել հանրահավաքներին մասնակցողներին:

Գլխավոր դատախազության հաղորդագրությունը տեղեկացնում է, որ ազգային անվտանգության եւ հատուկ ինչական ծառայությունները պարզել-հիմնավորել են, որ օրենքով սահմանված կարգի խախտմամբ Երեւանի Ազատության հրապարակում 2008-ի փետրվարի 29-ին զանգվածային միջոցառումների կազմակերպիչները գիտել են զանգվածային միջոցառման մասնակիցներին՝ ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություն գործադրելու, զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով:

2008-ի փետրվարի 29-ին Վրեժ Նիկոլյանը իր խնամի Համլետ Հովհաննիսյանից (ով հայտնի է «տոռս Համո» մականունով) պատվեր է ստացել 8 մմ հատության, 10-12 սմ երկարության, սուր ծայրով ամրանից պատրաստել տալ 80 մեսաղական կոնստրուկցիա եւ Ազատության հրապարակում տեղադրված «հատուկ գունդ» կոչվող հասարակական կազմակերպության վրանի մոտ նույն գնդի անդամներից մեկից ստանալով դրա նմուշը՝ այն ներկայացրել է Երեւանի Շիրազի 13 հասցեում գտնվող Հենրիկի խանութի զողոր վարպետ Հրաչյա Սահակյանին եւ պատվիրել դրանց պատրաստումը՝ նախապես համաձայնեցնելով խանութի տնօրեն Ամոն Հալաջյանի հետ: Պատվերն իրականացնելուց հետո՝ նույն օր, մարմնական վնասվածքներ պատճառելու համար հատուցված 80 «ոգնիներ», Նիկոլայը Համլետ Հովհաննիսյանի ուղարկած մարդկանց միջոցով տեղափոխել է Ազատության հրապարակ, որոնք հաջորդ օրը՝ մարտի 1-ին, օգտագործվել են ոստիկանության աշխատակիցների նկատմամբ բռնություններ գործադրելու, զանգվածային անկարգություններ հրահրելու համար:

Վրեժ Նիկոլյանը կալանավորվել է, նրան մեղադրանք է առաջադրվել զանգվածային անկարգություններ կազմակերպելու համար, իսկ Համլետ Հովհաննիսյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում: Միջոցներ են ձեռնարկվում նրան եւ հանցագործության մյուս մասնակիցներին հայտնաբերելու համար:

Գ. Գ.

ԱՅՍՕՐՎԱ ԹԵՄԱՆԻՇ

Մեւանից ջրառն այս տարի կկրկնապատկվի

1-ին էջից

Իսկ ո՞վ է վերահսկում ջրառը՝ ապօրինի բացթողումներ կարող են լինել, հեռաձայնվեց պատգամավորներից **Արծվիկ Մինասյանը, Գոհար Եսոյանն** ավելացրեց ջրակոռուսների մի փաստ: Ըստ Ա. Անդրեասյանի՝ վերահսկողությունը բարձր մակարդակի վրա է, բացի իր ղեկավարած գերատեսչությունից, վերահսկողություն են իրականացնում բնապահպանության եւ էներգետիկայի նախարարությունները, ջրակոռսի մասին էլ (Մասիսին մերձ տարածում) խոսացավ զբաղվել:

Առյուծ ջրի մակարդակի պակաս նվազումը բնապահպանական խնդիրներ չի՞ առաջացնում, ապրած լուցուցիչ ջրառի վերաբերյալ փորձագիտական գնահատական տվել է ԳԱԱ փորձագիտական խումբը: Ա. Անդրեասյանը հանդուգն էր, որ Սեւանի նոր ջրառից բնապահպանական խնդիրներ չեն ծագի, անցած տարի 20 սմ-ով Սեւանի մակարդակը բարձրացել է, նոր ջրառից հետո էլ ոչ թե նվազելու, այլ ընդամենը 8-9 սմ-ով պակաս է աճելու: Բացի այդ, Սեւանի ավազանի 3 հաղորդում կոյտերի հիմնական մարման 3 կայան է կառուցվելու, որոնք կբարելավեն էկոհամակարգը, իսկ փորձագիտական հանձնաժողովի գնահատական եղել է, կառավարությունում ենթարկվել է եւ այնտեղ եղող հակափաստարկները հաշվի են առնվել օրենքի նախագծում, մասնավորապես՝ ամեն ջրառից առաջ երկու շաբաթը մեկ կառավարությունը նոր ջրառի չափի մասին տեսք է որոշում կայացնի, սակայն նաեւ նշեց տարաձայնությունների մասին, որ կառավարության ներկայացրած ջրառի հայտի թիվը շատ բարձր են համարել հանձնաժողովի գնահատականում, գտնելով, որ ավելի պակաս բացթողում է հնարավոր:

Նա նկատեց, որ փոփոխությունները երկարաժամկետ ընթացքում ընդունելիս այդ հանձնաժողովի կարծիքը կարող է կզվել փոփոխություններին:

Փոփոխությունների վերաբերյալ տրամագծորեն հակառակ կարծիքի էին **Վիկտոր Դալլաքյանն ու Սյուզան Սաֆարյանը**: Առաջինը, որ ժամանակին Վարդան Բոսանջյանի եւ երկու ուրիշ պատգամավորի հետ հեղինակել էր «Սեւանա լճի մասին» մայր օրենքը, որի հիման վրա մշակվել է նաեւ, ինչպես պատգամավորը նշեց, Սեւանի փրկության 300 մլն դրամ արժեցող ծրագիրը, նախ անհարժեշ համարեց փորձագիտական եզրակացությանը ծանոթանալ գոնե առաջին ընթերցումից հետո, սակայն՝ առաջարկվող փոփոխությունները դիտարկեց մի շարք «հզորների» լոբբիինգի տեսանկյունից: «Լճի մակարդակի իջեցումը պայմանավորված է նրանով, որ որոշ անձանց վիլլաները ջրի տակ չմնան», ենթադրեց նա: Նա հիշեցրեց մայր օրենքի դրույթը, որով 150 մ շառավղով լճի շուրջը չէր կարող օբյեկտ կառուցվել, մինչդեռ շատ, այսպես կոչված, ֆինանսական հզորներ օրենքը խախտել եւ օբյեկտներ են կառուցել: Այս փաստի սուգծան եւ խորհրդարանին իրազեկելու հարկ կա ըստ նրա: Նաեւ եկրորդեց Ս. Սաֆարյանը՝ վստահ, թե սա հերթական լոբբիինգի ծեւն է՝ Սեւանի բարձրացման տեմպերը նվազեցնելու կամ կանգնեցնելու միտումով, եւ 15 օրը մեկ կառավարության կողմից ջրառի չափի որոշումը դիտեց որոշակի շրջանակի շահերին համապատասխան չափերը պահելու հանգամանք: Նա նաեւ ուշադրություն հրավիրեց այն փաստի վրա, որ Սեւանից բաց թողնված ջրի 50 տոկոսն է արդյունավետ օգտագործվում, եւ լավ կլինի դրա մասին մտածենք, ոչ թե ջրառ կրկնապատկենք:

Այս ընդդիմախոսությանն արձագանքեց Աժ սոցիալական, առողջապահության եւ բնապահպանության հանձնաժողովի նախագահի տեղակալ **Մկրտիչ Մինասյանը**, թե Սեւանը շահարկման առարկա չդարձնենք, որոգման խնդիր է լուծվում միայն, ջրառի վերահսկողությունը մեծացնենք, իսկ երկրորդ ընթերցման ժամանակ էլ փորձագիտական հանձնաժողովի գնահատականը կկզվի: Ա. Անդրեասյանն ավելի վաղ նկատել էր, որ փոփոխությունները ներկայացնում են որոգման համակարգերի պահանջը միայն՝ 42 հազար հա տարածի ոռոգում արդիսվելու նպատակով:

Այսպես թե այնպես, այս փոփոխությունների առաջին ընթերցմամբ քննարկումն ավարտվեց, եւ կասկած չկա, որ հվեարկության ժամանակ խնդիրներ չեն առաջանա:

ՕՐՎԱԿԱՐԳ

Այսօր

◆Ժամը 10.00-ին ԳԱԱ-ում կստորագրվի ՌԴ ժողտնտեսության ակադեմիայի հետ հուշագիր՝ «Կորոտատիվ կառավարման բարձրագույն դպրոցի ստեղծման» մասին:

◆Ժամը 11.00-ին «Ուրբաթ» ակումբի հյուրն է Կալիֆորնիայի համալսարանի պրոֆեսոր Ռիչարդ Հովհաննիսյանը:

◆Ժամը 11.30-ին Գրողների միությունում տեղի կունենա Լեւոն Անանյանի մամուլի ասուլիսը՝ Վրաստանում անցկացվելիք Սայաթ-Նովյան վարդատոնի, «Վերնատուն» 110-ամյակի, Հայ թոթզիայի փառատոնի վերաբերյալ:

◆Ժամը 12.00-ին «Հայաշխարհ» մամուլի ակումբի հյուրերն են «Հայկական հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր, տնօրեն Հովհաննես Այվազյանը, ԳԱԱ հայագիտության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս, քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը, մշակույթի նախարարության գրահրատարակչական գործի գործակալության պետ, բանաստեղծ, նկարիչ Էդվարդ Միլիտոնյանը:

◆Ժամը 12.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է Արտակ Սադոյանը:

◆Ժամը 13.00-ին Հայաստանի գրողների միության տան դահլիճում կմեկնարկեն ՀՀ անտառային օրենսգրքի կիրառման նպատակով մշակված մի շարք անտառային կանոնակարգերի վերաբերյալ երկօրյա սեմինար-քննարկումներ:

◆Ժամը 13.00-ին մշակույթի նախարարությունում տեղի կունենա «Ազգային պատկերասրահ» միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպիչների մամուլի ասուլիսը:

◆Ժամը 13.00-ին «Տեսակետ» ակումբի հյուրն է Գարեգին Ծոմասյանը: Նա կներկայացնի SS զարգացման հայեցակարգը:

◆Ժամը 13.30-ին ԵՊՀ «Պալյան» դահլիճում կսկսվի եռօրյա գիտաժողով՝ հայոց պետականության հիմնադրման 90-ամյակի կապակցությամբ:

◆Ժամը 14.00-ին ԳԱԱ նախագահության շենքում տեղի կունենա գրող, հրապարակախոս Բակուր Կարապետյանի «Արցախյան գոյամարտի համահավաք» մատենաշարի առաջին գրքի շնորհանդեսը:

◆Ժամը 14.00-ին ժուռնալիստների միությունում կամփոփվեն «Մեմ եմ, մեր մարզերը» հանրապետական համայնքային թատրոնների առաջին փառատոնի արդյունքները:

◆Ժամը 14.00-ին պատանության նախարար Սեյրան Օհանյանը կայցելի Երեւանի խ. Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարան, որտեղ կհանդիպի ուսանողների եւ հաճախասարանի դասախոսական կազմի հետ:

◆Ժամը 15.00-ին բնապահպանության նախարարության դահլիճում տեղի կունենա նախարարի ասուլիսը 2008-12 թ.թ. անելիքների մասին:

◆Ժամը 15.30-ին կամերային երաժշտության տանը ԿԳ նախարարությունը եւ «Սփյուռք» համահայկական ուսանողական միավորումը կազմակերպում են սփյուռքահայ ուսանողների համաբուհական մշակույթի 6-րդ փառատոնը:

Լուրջ երկխոսություն չի կայանալու, եթե շարունակվի «խուլ ու համրի» այս փիումը

Իշխանությունն էլ, ընդդիմությունն էլ գիտեն, որ իրենք տարբեր բաներ են ուզում

Ամենի տարօրինակ իրավիճակ, ինչպիսին ստեղծվել է այսօր մեր երկրում, թերևս դժվար էր պատկերացնել: Այսօր ամենաբուռն ճնշարկվող թեման հեղինարական լարվածությունը լիցքաթափելու համար իշխանությունն ու ընդդիմությունն երկխոսության հարցն է: Հեղափոխականն այն է, որ երկու կողմերում գտնվողներն էլ մեծ պաթոսով հայտարարում են, թե երկխոսությունը խիստ կարևոր է, բայց նույն ընդգծվածությամբ էլ որևէ լուրջ բան չեն անում դրա կայացման համար: Կարելի է կարծել, որ երկխոսությունն այդպես էլ չի կայանա ոչ միայն այն պատճառով, որ մինչ օրս կողմերը դժվարանում են ասել, թե ինչի շուրջ են երկխոսելու, այլև այն պատճառով, որ երկու կողմերի երկխոսության թեման ընդհանուր եզրեր չունի: Այսինքն, ներքին քաղաքական ընդդիմությունն իր բոլոր կարգի հայտարարություններով հանդերձ ակնհայտորեն ասում-պնդում է, որ որևէ էական զիջման չի գնալու եւ իրենց վերջնական նպատակը շարունակում է մնալ իշխանության զավթումը (իրենց խոսքով դա կոչվում է իշխանափոխություն), իշխանությունն էլ ամեն տեսակի ձեւական կամ ոեալ հայերի կարող է գնալ, որ երկխոսությունը կայանա, բայց երբեք չի կարող հրաժարվել իր իշխանությունից, ինչն, ի դեպ, բնական է:

Իշխանությունն էլ, ընդդիմությունն էլ «սրանց» չեն ուզում երկխոսել, որովհետեւ երկուսն էլ գիտեն, որ դա չի սպասվելու: Իշխանությունը որևէ բան չի զիջելու, որը կվտանգում կասավարման մի քանի իրադարձությունների, որոնք վկայում են, որ երկխոսությունը չի կայանալու:

Մայիսի 2-ին Համաժողովրդական շարժման սաստկող ուժերի 2-րդ կոնգրեսում ծավալուն ելույթով հանդես եկավ Լեւոն Տեր-Պետրոսյանը՝ իր խոսքով գնահատելով մարտյան իրադարձությունները: Չնայած առաջին նախագահի իրեն բնորոշ մեղադրական մեկնաբանություններով հանդես եկավ, այդուհանդերձ մի պահ տպավորություն ստեղծվեց, թե ամեն ինչ կորած չէ. նոր նախագահ Սերժ Սարգսյանին բաց չթողնելով հեռագա որեւէ կարգի դրական քայլերի համար: Չնայած սա կարելի էր նաեւ խաբուսիկ տպավորություն համարել, քանի որ ընդդիմության՝ կոնգրեսին հաջորդած քայլերը եւս մեկ անգամ ցույց տվեցին, որ շարժման թիմը եթե անգամ հասկ չգիտի ինչ է անելու մոտ ապագայում, ապա մի բան գոնե հասկաց գիտի, որ շարունակելու է պայքար՝ իրենց հայեցի միջոցներով: Չնայած առաջին նախագահը նկատեց դրական բան էլ ասաց. առաջինը, որ Ադրբեջանը «հանկարծ չխորձի» օգտվել մեր վիճակից, երկրորդ՝ խնդրեց չդադարեցնել Հայաստանյան մարտահրավերներ ծրագրով մեր երկրին տվող ֆինանսական աջակցությունը: Այս մտերից կարելի էր ուրախանալ, եթե հավաս լիներ առաջին նախագահի անկեղծությանը, եւ եթե դրանք արդեն «ուռացած» հայտարարություններ չլինեին: Օրերս Տեր-Պետրոսյանի մամուլի խոսնակ Արմեն Մուսինյանը մամուլին ասուլիսով հարցերին պատասխանելիս ընդգծեց, որ իրենք իշխանություններին 2 ամիս ժամկետ են տվել «խելքները գլուխները հավաքելու համար», բայց եթե նրանք չօգտվեն առիթից, իրենք շարունակելու են իրենց պայքարը: Եվ այս հայտարարությունն առկում է այն իրադարձությունների ֆոնի վրա, որ մեզ գոհեր ունեցանք, դրսում մի լավ խայտառակ եղանք ու հիմա դրսինների մոտ «լավագույն լինելու համար» ինչ-որ պահանջներ ենք կատարում: Ընդդիմությունը հաշվի չի առնում նաեւ հանգամանքը, որ այժմ իշխանությունը սպիտված, թե սեփական ցանկությամբ, այնուամենայնիվ որոշ հայեր անում են: Այլ հարց թացումն կատարված մի քանի իրադարձությունների, որոնք վկայում են, որ երկխոսությունը չի կայանալու:

Լեւոն Տեր-Պետրոսյանի խոսքից կարելի է նաեւ նշմարել, որ ընդդիմադիրները հեռագա հասկ ծրագիր դեռ չունեն, բայց այդուհանդերձ պայքարը չի դադարեցվելու՝ միայն մնում է մտածել, թե այս անգամ մարդկանց ինչով են տանելու իրենց հետեւից: Ի դեպ, մարդկանց իրենց հետեւից տանելու հարցը լուծելու համար ինչեր Հայ ազգային կոնգրես ձեւավորելու գաղափարը: Արմեն Մուսինյանն էլ օրերս ձեւակերպեց, թե կոնգրեսի ստեղծման ձեւաչափն է փնտրվում, որից հետո իրենց հաղաղական պայքարը նոր փուլ է թեւակոխելու:

Երկխոսության առթն հոգնեցնող եւ ոչ մի կերպ չհուսադրող թեմայի շրջանակներում ուշագրավ է «Ժառանգություն» կուսակցության առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանի ելնարկման առաջարկը կուսիցիոն 4 ուժերի ղեկավարներին եւ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Քննարկման առաջարկի միանգամից 5 ուժերի ղեկավարների միաժամանակյա մերժումը եւս վկայում է, որ ոչ մի կողմը տարադրված չէ զրուցելու, հարցը պարզելու: Իսկ «Ժառանգության» առաջնորդի քայլն էլ կարելի է համարել առաջին նախագահին «լծելու» դրսերում, որից հետո կուսղեկավարը թերեւ կարճանա տերությունական թիմի լուրջ ինքնադատության ու կշռամբարների: Կասացվի, որ «Ժառանգությունն»՝ իր լողված գործելակերպով, անցանկալի է թե՛ իշխանությունների համար՝ նախընտրական շրջանում Լեւոն Տեր-Պետրոսյանին պաշտպանելու համար, եւ հենց Տեր-Պետրոսյանի թիմի համար՝ իրենց շարքը լծելու պատճառով:

Որ ընդդիմությունը շարունակում է իր նույն գործելաոճը, շատ օրինակներով պարզ է, բայց որ իշխանությունն էլ այս շրջանում բացթողումներ է անում, դա էլ ճշմարտություն է: Օրինակ, մի՞թե ժամանակը չէ վերջ տալու մանկապարտեզային դրսեւորումներին, որոնք այս գեղեցկած մթնոլորտում ավելի են լարում հասարակությանը: Ինչո՞ւ են աշխատանքից ազատում մի բժշկի, որն ասում է, թե Նժդեհ առաջնորդ Արամ Կարապետյանի առողջական վիճակը վատ է: Իհարկե, աղմուկից հետո հայտարարում են, թե աշխատանքից չեն ազատել, այլ տեղափոխել են այլ հիվանդանոց, բայց անչափահասն էլ հասկանում է՝ ինչ է կատարվել իրականում: Մի՞թե հնարավոր չէ նման քայլերից խուսափել, չէ՞ որ իշխանությունների հենց սայթաքումներին անհամբեր սպասում են մյուս բեւեռում եւ մի լավ շահարկելու են: Նման քայլերով իշխանություններն ընդդիմությանը հիմքեր են տալիս ավելորդ շահարկումների: Իշխանությունները պետք է մտածեն ավելի հասկ եւ ճիշտ գործելու կամ դատական գործընթացների մասին: Գուցե մերոնք այնքան հզոր չեն, որ մարտի դեմքերի գործով բոլոր «անկաղ» ձերբակալվածներին բաց թողնեն՝ ազատվելով նաեւ եհխով խարանից, բայց նույնանման վճիռներով ու ձեռագրով դատական գործերն էլ ավելի են լարում իրավիճակն ու աղբոցության հոդ գցում երկրի ղեկավարության վրա:

Հանրահավաքների եւ երթերի օրենքը եւս շահարկման թեմա է: «Ուրբաթ» ակումբում դժգոհություններ էին արտահայտում փոփոխված օրինագծի մասին: Ինչ է նշանակում, կարելի է «ինքնաբխվել» 6 ժամ, սա ինչ անհեթեթություն է: Չնայած մի պահ մտածում ես, թե ազատորեն հանրահավաքներ հավաքելու հնարավորության դեմքում ինչ է սպասվում մեզ առջեւում, ուղղակի տարտափում ես: Եվս մեկ ցնցում չի կարելի թույլ տալ, եւս մեկ նման արյունահեղության հնարավորություն ուղղակի պետք է բացառել:

Այս պահի դրությամբ կարելի է փաստել, որ իշխանությունները ոչ մի լուրջ զիջման չեն գնալու եւ միակ խնդիրը միջազգային կառույցների առջեւ գեղեցկացիկ աշխատելն համբավը վերականգնելն է ու ընդդիմության թեման «ցրելը», իսկ ընդդիմությունն էլ թիվածի մի կետում չի բավարարվի, այլ ամբողջ թիվածին է ուզում, ինչն անհնար է: Հետեւաբար, նրանց էլ մնում է ինչպես կարող են դրոշակներ ստեղծել:

ԳՈՒՍԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Ամենաազնիվ մասնագիտության մարդը

Բժշկությունն ամենաազնիվ գիտությունն է, ասում էր բժիշկ Բաբլումյանը եւ այդ ազնվությամբ էլ ապրում ու աշխատում էր, բուժելով եւ օգնելով հազարավոր հիվանդների: Նա իմաստուն բժիշկ էր, շատ էր սիրում իր գործը եւ չէր բավարարվում միայն հիվանդին մասնագիտական օգնություն ցույց տալով, բարձր էր հիվանդի, ինչպես նաեւ ամեն մարդու հետ զրվելու, նրան հասկանալու կարողությունը: Համբերատար էր, ուշադիր, բարեկիրթ, համեստ, գիտեր իր գործը եւ գործում էր մեծի երկաթե տրամաբանությամբ: Այսպիսին կիրեն **Յուրի Բաբլումյանին** նրա հարազատները, բարեկամները եւ հազարավոր այն մարդիկ, ում նա օգնել է, ոտի կանգնեցրել:

2008-ի ապրիլի 13-ին դադարեց բաբախել մեծ ու արժանավոր մարդու՝ բժիշկ Յուրի Ալեխեյի Բաբլումյանի սիրտը: Հավանաբար մի ամբողջ կյանք է հարկավոր երջանիկ հարգանքը վայելելու եւ արժանավոր մարդ դառնալու համար: Մարդ, որը սիրում էր իր գործը, ապրում էր դրանով, հավատացած, որ բարիք է բերում մարդկանց:

Յու. Բաբլումյանը ծնվել է 1938-ի հունվարի 2-ին, Սեւանավանի երջանի Լեռնաշեն գյուղում: Նյութական վատ վիճակը չէր խանգարել շարունակելու կրթությունը Երեւանի բժշկական ինստիտուտում, որն ավարտում է 1963-ին եւ վերադառնալով հայրենի Կիրովական, իր գործը սկսում է թիվ 1 հիվանդանոցում որպես վիրաբույժ: Շարունակելով կրթությունը օրդինատուրայում որպես ուրոլոգ, ավարտում է 1970-ին եւ կազմակերպում է միջերջանային ուրոլոգիական բաժանմունք, որը ղեկավարում է մինչեւ 1983-ը, ապա եղել է թիվ 1 հիվանդանոցի գլխավոր բժիշկը, իսկ 1986-1991-ը գլխավորել է Կիրովականի հաղթահրդի առողջապահության բաժնի վարիչի պաշտոնը: 1986-ին Կիեւի ուրոլոգիական գիտահետազոտական ինստիտուտում պաշտպանում է թեկնածուական թեզ՝ սանանալով բժշկական գիտությունների թեկնածուի գիտական կոչում: 1988-ի Սպիտակի ահավոր երկրաշարժի ժամանակ ի հայտ եկան բժիշկ Բաբլումյանի կազմակերպչական բարձր ունակությունները, կարողացավ արագ կերպով ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ տուժածներին ընդունելու եւ օգնություն ցույց տալու համար: Լինելով գթասիրտ, ուրիշների ցավը հասկացող, սրտերանի էր դնում ոչ միայն մարմնին, այլեւ վիրավորված հոգիներին: 1998-ին Յու. Բաբլումյանը նշանակվում է Լոռու մարզպետարանի առողջապահության վարչության պետ, իսկ 2001-ին տեղափոխվում է Վանաձորի թիվ 1 հիվանդանոցային համալիր, որի տնօրենն էր մինչեւ 2007-ի վերջը: 2001-ին, երբ կառավարության որոշումով միացվեցին 6 բուժիմարկներ, բժիշկ Բաբլումյանը ղեկավարի իր հմտությամբ կարողացավ այնպես սահուն ու ճիշտ անցկացնել օպտիմալացման ծրագիրը, որ ոչ մեկը չտուժեց, ինչը առաջացրեց շատ-շատերի հիացմունքը: Հիվանդանոցային համալիրը կայացավ եւ փաստացի իր վրա վերցրեց մարզային հիվանդանոցի պարտականությունները: Օպտիմալացման ծրագիրը տվեց իր արդյունքը՝ տարեկան 5000 հիվանդ բուժօգնություն էր սանում: Հիվանդանոցի կազմում գործում են վիրաբուժական, մանկաբարձ-գինեկոլոգիական, մանկական վիրաբուժական, մանկական սոմատիկ, շտաբ բուժօգնության, ախտաբանանատոմիական եւ ախտորոշման բաժանմունքները: Նրա շնորհիվ այսօր հիվանդանոցը համալրված է համակարգչային տոմոգրաֆով, ինչը մեծ դեր ունի հիվանդությունների ախտորոշման եւ որակյալ բուժտպասարկման մեջ:

Յուրի Բաբլումյանը իր ընտանիքում երջանիկ մարդ էր, ազնիվ ամուսին եւ հայրական պարտականությունները արբորեն կատարող: Համոզված եմ, որ նույնիսկ տարիներ անց Յուրի Ալեխեյի Բաբլումյանի անունը կմնա թե՛ նրա հարազատների, թե՛ նրա հետ աշխատած մարդկանց եւ թե՛ հազարավոր այն մարդկանց հոգիներում, որոնք այսօր ապրում են շնորհիվ մեծանուն բժշկի: Յուրի Բաբլումյանը սիրում էր ասել, որ մարդն այնպես պիտի ապրի, որ գնալիս իմը ժպտա, իսկ մարդիկ լաց լինեն: Բոլորը նկատեցին Ձեր դեմքին Ձեզ հատուկ մեղմ ժպիտը... իսկ մարդիկ լալիս էին:

Ձեզ բարի հիշատակ, ազնիվ բժիշկ:

Հ. ՅԱՐԵՏՅԱՆ

ԹՈՒՐՔ ՍԱՄԱԼ

«Ատելության ոգով մի՛ դաստիարակեք երիտասարդներին»

Հայերին կոչ է անում ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Շենսոյը

Ինչպես տեղեկացրել է «Ենի շաֆաք» թերթը, ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նաբի Շենսոյը, մասնակցելով Potomac Ինստիտուտի նախաձեռնությամբ կոնգրեսի շենքում «Թուրք-ամերիկյան ազգամարտական գործակցության ապագան» թեմայով կազմակերպված սեմինարին, ելույթում ասել է, որ հայկական բանաձեւերի պատճառով «աղեսի շեմին» են կանգնել թուրք-ամերիկյան հարաբերությունները: Հայ մասնակցի այն հարցին, թե ինչու բանաձեւերի ընդունումն այլ երկրներում աղեսի պատճառ չի դառնում նրանց եւ Թուրքիայի հարաբերություններում, դեսպանը պատասխանել է. «Հարցը խրթին եւ ընդգրկուն է, չի կարելի դրան միակողմանի մոտենալ: Առաջընթացի (հայ-թուրքական հարաբերություններում) լավագույն եղանակը կլինի այն, որ կողմերը 1915-ի իրադարձությունների ճշմարտությունը բացահայտելու համար նստեն սեղանի շուրջը»:

Շենսոյը հիշեցրել է հայ եւ թուրք պատմաբանների համատեղ հանձնաժողով ստեղծելու Թուրքիայի վարչապետ Էրդողանի՝ Հայաստանի ղեկավարներին արած առաջարկը, նշել է, որ թուրքական արխիվները բաց են եւ նույնը ակնկալում են հայկականի պարագայում, ընդգծելով. «ԱՄՆ-ում եւ այլ երկրներում հաղթական գործիչները հավանություն են տալիս պատմությունը պատմաբանների հայեցողությանը թողնելու թեզին»:

Այս դեսպանը շարունակել է. «Չպետք է երիտասարդներին դաստիարակել ատելության ոգով: Մենք այդպես չենք վարվում Թուրքիայում: Մենք ցանել եմ Թուրքիայի հայկական ծագումով հաղաքացիների միջավայրում: Հայ ժողովրդի նկատմամբ համակրանք եմ տածում: Ատելությամբ ոչնչի չենք հասնի: Շուրջ 40 հազար հայաստանցիներ աշխատում են Թուրքիայում: Բազմաթիվ թուրք երեխաների դայակները հայեր են: Եթե նրանց ընտանիքները բնամաբար տրամադրված լինեին, ապա իրենց զավակներին չէին վստահի հայ դայակներին»:

Ելույթում Շենսոյը հույս է հայտնել, որ կնորմալանան Թուրքիայի եւ Հայաստանի հարաբերությունները, որպես օրինակ բերել է նախագահ Գյուլի, վարչապետ Էրդողանի եւ արտգործնախարար Բաբաջանի հայ գործընկերներին հղած շնորհավորական ուղերձները, «դրական» է համարել ուղերձներին հայկական կողմի արձագանքը եւ նշել է, որ երկրում բոլորը դատապարտել են Հրանդ Դինքի սպանությունը, տասնյակ հազարավոր մարդիկ դրա համար փողոց են դուրս եկել, հետեւաբար ճիշտ չեն այն պնդումները, թե հայկական հարցերը չեն քննարկվում Թուրքիայում:

Վերջում նա ասել է, որ Թուրքիայում ոչ ոք չի դատապարտվել Հայկական հարցին առնչվող հայտարարությունների համար, կողմերը պետք է հանդիպեն, որպիսեսի թշնամանքով ոչ մի հանգրվանի չեն հասնի:

ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Նաբի Շենսոյի խոսքերը մեկնաբանության կարիք չունեն: Պարզապես պետք է թարմացնել նրա հիշողությունը, ասելով, որ վերջին 5 տարիներին 301-րդ հոդվածով Թուրքիայում քրեական 6745 գործ է հարուցվել, նրանք պահին մարդու իրավունքների պաշտպան Ռազբի Զարաֆոլուի դեմ հարուցված գործերի թիվը 9 է, որոնք առնչվում են Հայոց ցեղասպանության թեմայով կատարված հրապարակություններին: Մեծարգո դեսպանը Հրանդ Դինքի սպանությանն անդադարանալիս մոռացել է նաեւ «Մենք բոլորս Օգյուն Սամաստ ենք» գրությամբ պատասանները, որոնք բարձրացվում էին բազմաթիվ հաղթների մարզաքաղաքում, հավանաբար ոչ թե սպանությունը դատապարտելու, այլ մարդասպանին արդարացնելու համար:

Հ. ՅԱՐԵՏՅԱՆ

ՅՈՐՍԻ ՀԱՎԱՔ

Կոսովոն որպես գործիք

Թվում էր՝ Կոսովոյի խնդիրը կամաց-կամաց կորցնում է իր հրատապությունը. արդեն 40 երկրներ ճանաչել են նրա անկախությունը, այդ թվում՝ ԱՄՆ-ը եւ Եվրոպայի առաջատար պետությունները: Բացի դրանից, Կոսովոյում անխոով բույն է դրել ՆԱՏՕ-ի խոշորագույն ռազմական բազան 16 հազար զինուոայողներով:

Բայց ահա օրերս Եկատերինբուրգում հավաքվեցին Ռուսաստանի, Չինաստանի, Հնդկաստանի եւ Բրազիլիայի արտգործնախարարները, որոնք հանդես եկան Կոսովոյի կարգավիճակը վերանայելու օգտին: Եթե այս չորսի տեղը հավաքված լինեին փոքր պետություններ, նրանց պահանջը կարելի էր ընդունել որպես հուսահատության ճիչ: Բայց այստեղ իրական ասպարեզ են դուրս եկել համաշխարհային քաղաքականության ծանրաբարոյներ, որոնց մեղադրել պարզունակության կամ անզորության մեջ՝ հակացուցված է: Ուրեմն ինչ ենթատեքստեր են թաքնված այս հզոր քայլի միացյալ գործողությունների տակ: Չէ՞ որ մեծ քաղաքականության մեջ անիմաստ ու անհեռանկար մասնաբային միջոցառումները չեն խրախուսվում:

Այն պարագա, որ Բրազիլիայից բացի ծնացածն ունեն անջատողականության խնդիրներ, էական է, բայց վճռորոշ չէ: Ի դեմս Ամերիկայի նախագահի թեկնածու Ջոն Մակքենի, ձայներ են հնչում Ռուսաստանին արտախելու «ոսկեյա կից»: Չինաստանը դիտվում է որպես ԱՄՆ-ի տնտեսական ու քաղաքական հիմնական հակառակորդ: Ասենք, Բրազիլիան ու Հնդկաստանն էլ չեն հոգնել ԱՄՆ-ի միահեծան համաշխարհային գերիշխանությունից: Եվ եթե տնտեսական ու մարդկային հսկայական ռեսուրսներ ունեցող այս երկրները հավակնություններ են դրսեւորում գրեթե որոշ հարցերում միացյալ ուժերով դիմակայելու աշխարհի գերհզորին, ապա ուրեմն պետք է խոսել միջազգային նոր միտումի մասին:

Անշուշտ պատահական չէ, որ չորս պետությունների ներկայացուցիչների ներկա հանդիպումը տեղի ունեցավ Ռուսաստանում: Երկիրն ընտրել է նոր ղեկավար, եւ նա փորձի հաստատի իր նոր արտաքին քաղաքական կողմնորոշիչները: Տվյալ դեպքում քաղաքը հանդես է գալիս Արեւմուտքի «միակողմանի եւ միջազգային կանոնները քիչ կերպով խախտող» խալերի դեմ, ինչը պետք է ընկալել որպես անտող հայտարարություն որոշակի քաղաքական ուղղությունների մասին: Եթե Մեդվեդեւին հաջողվի իրոք միավորել այս ուժերին, ապա հակարեւմտյան հակազդեցությունը կարող է կոնկրետ ձեւեր ընդունել: Կոսովոյի հարցը դրա դրսեւորումներից սոսկ մեկն է:

Մենք բանների կարծիքով, չի դրված քաղաքական, տնտեսական, ռազմական եւս ռազմական դաշինք ստեղծելու հարց: Գերմանացի քաղաքագետ Այնեմանոյ Ռաթը դա համարում է սոսկ շահերի միություն, որով փորձ է արվում աշխարհում ստեղծել ուժի նոր բեւեռ առկա իրավիճակի վրա ներգործելու նպատակով: Այսինքն՝ քաղաքական «ակոնքներ» արդեն կարող են ստեղծվել նաեւ առանց Ամերիկայի:

Բոլոր պարագաներում աշխարհի մեծերի ձեռքում խաղալիք կամ գործիք են դառնում փոքր պետությունները: Ոչ գիտի, թե մի օր էլ ինչ կասեն նրանք Ղարաբաղի մասին:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

«Սալինյան ճշմարտությունը» Սահակաշվիլու Վրաստանում

1-ին էջից

Դժվար, շատ դժվար է հասկանալ Վրաստանի ԿԸՀ-ի թեկուզ նախնական, բայց այսօրինակ ձեակերպման տվյալները այն պարզ պատճառաբանությամբ, որ վրացական իրականությունը լի է ազգային փոքրամասնությունների դժգոհություններով ու դրանց առնչվող խնդիրներով: Եվ առնվազն տարօրինակ է, որ դժգոհող ազգային փոքրամասնությունները գրեթե բացարձակ «աջակցում են» իշխող կուսակցությանը, որին էլ, ըստ էության, ուղղված, հասցեագրված են փոքրամասնությունների խնդրանքներին առնչվող խնդիրները:

Երեկ վրացական ընդդիմությունը հայտարարել էր միանգամից երկու վայրում անցկացվելիք ցույցերի մասին: Վրաստանի խորհրդարանի շենքի առջեւ, Ռուսթավելի պողոտայում վրաց լեյբորիստների կազմակերպած հանրահավաքին մասնակից էին ընդամենը մի քանի հարյուր մարդ, իսկ խոսակցությունները երեկ գիշեր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հարեւանությամբ սկսված հանրահավաքն այսօր շարունակելու մասին չիրականացան: Սակայն հեռուստաթերթերից ու կայքէջերում տեղադրվող տեղեկություններն ու գնահատականները թույլ են տալիս եզրակացնել, որ վրաց ընդդիմադիր մի քանի ուժերը, որ տարբեր ճանապարհներով ձայներ են հավաքել, բանակցում են հնարավոր դաշինքի շուրջը:

Ինչեւէ, օրավարին Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացնում էր նախնական տվյալները ոչ միայն մասնակցության առնչությամբ, այլեւ քվեարկության արդյունքների: Ըստ այդմ, մասնակցությունը մայիսի 21-ի խորհրդարանական ընտրություններին կազմել է մոտ 55 տոկոս: Ընտրատեղամասերի ընդհանուր թվի մոտ 67 տոկոսը տվյալների մշակման հիման վրա Վրաստանի Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ներկայացրեց նաեւ քվեարկության արդյունքների նախնական տվյալներ, որոնց համաձայն առաջին տեղում իշխող Միացյալ ազգային շարժում կուսակցությունն է՝ ավելի քան 59 տոկոս ձայներով: Երկրորդ տեղում ոչ կուսակցություններ Միավորում Միացյալ ընդդիմությունն է, որի օգտին քվեարկել է ընտրողների մոտ 16.5 տոկոսը:

Նախնական տվյալների համաձայն, այս ընտրությունների հինգ տոկոսանոց շեմը հաղթահարել են նաեւ Վրաստանի լեյբորիստները եւ մի քանի ամսվա պատմություն ունեցող Քրիստոնեա-դեմոկրատական շարժումը: Լեյբորիստների օգտին քվեարկել է ընտրողների մոտ 7 տոկոսը: Քրիստոնեա-դեմոկրատական շարժումը հավաքել է քվեարկությանը մասնակցած ընտրողների ձայների ավելի քան 8 տոկոսը: Այս կուսակցությունը ղեկավարում է նախկինում «Իմեդի» հեռուստաընկերության լրատվական ծառայության ղեկավար Գեորգի Թարգամաձեն, որ որոշ լրատվական հաղորդման մենաբան ակտիվորեն մասնակցում էր անցյալ տարվա նոյեմբերին Վրաստանում տեղի ունեցող իրադարձություններին:

Վրաստանի խորհրդարանական այս ընտրություններով որոշվում էր պառլամենտում 150 մանդատների հարցը՝ 75 համամասնական եւ 75 մեծամասնական: Այս ընտրությունները տարբերվում էին նախորդներից նաեւ մի էական առանձնահատկությամբ. մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուները բոլորը ներկայացվել են կուսակցությունների կողմից: Նախնական տվյալներով, մեծամասնական ընտրակարգով խորհրդարանական մանդատների ավելի քան երկու երրորդը ստացել են իշխանական կուսակցության թեկնածուները:

Վրացական ընդդիմության բավականին մեծ թվով լիդերներից գրեթե ոչ մեկը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախնական տվյալներով, չի հաղթել մեծամասնական ընտրատարածքներում: Եթե ներկա արդյունքների հիման վրա ներկայացվի ապագա վրաց խորհրդարանը, ապա կարելի է խոսել իշխող կուսակցության կողմից խորհրդարանում ընդգծված մեծամասնություն ունենալու մասին՝ ավելի քան 90 մանդատ՝ 150-ից:

Ինչ վերաբերում է դիտորդական առաքելությունների նախնական գնահատականներին, ապա ինչպես ԱՊՀԿ-ի, այնպես էլ ԵԱՀԿ-ի, ՆԱՏՕ-ի եւ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի դիտորդների նախնական հայտարարության համաձայասխան, խորհրդարանական ընտրությունները Վրաստանում գնահատվում են դրական: Ամեն դեպքում, ավելացնեմ, որ դիտորդական առաքելությունները նշումներ են արել ընտրախախտումների, կեղծիքների մասին, բայց առայժմ դրանք գնահատվել են ոչ էական:

Ընտրախախտումների մասին բողոքներն ու արձագանքները շարունակվում էին, մինչդեռ երեկ արդեն ԿԸՀ-ն չեղյալ հայտարարեց 14 ընտրատեղամասերում անցկացված քվեարկությունը:

ՀԱՄԱՌՈՏ

«Որքա՞ն է հայ միգրանտների թիվը Թուրքիայում»

Մայիսի 18-ին այս վերնագրով թուրքական մամուլը տեղեկացրեց Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Հասան Ջուբուկի հարցադրման մասին, որի համար հիմք է ծառայել Ժողովրդա-հանրապետական կուսակցության փոխնախագահ, Նախկին դեսպան Շուրյու Էլեբոդաղի 2007-ի հոկտեմբերին Մեջլիսում արած հայտարարությունը. «Հայաստանի 70 հազար քաղաքացիներ աղօրինի աշխատում են Թուրքիայում»:

Հարցադրմանը պատասխանել է նրանց գործերի նախարար Բեհիր Աքալայը. «Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ գործող այցագրային ռեժիմի համաձայն, Հայաստանի քաղաքացիներն սահմանում են զբոսաշրջության 30-օրյա վիզա, որոնց մուտքը երկիր որեւէ զգուշավորություն չի պահանջում: 2007-ին Թուրքիա մուտք է գործել Հայաստանի 53 հազար 108 քաղաքացի, 53 հազար 359՝ դուրս է եկել երկրից: 2008-ի առաջին երկու ամիսներին Թուրքիա մուտք գործող հայաստանցիների թիվը 6 հազար 211 է, իսկ դուրս եկողներինը՝ 6 հազար 85: Աղօրինաբար Թուրքիայում բնակվելու պատճառով 2007-ին երկրից վտարվել է Հայաստանի 8, 2008-ին՝ 1 քաղաքացի»:

Թուրքիայի ներքին գործերի նախարարն ավելացրել է, որ երկրում աղօրինի աշխատող Հայաստանի քաղաքացիներին հայտնաբերելու դեպքում իրազեկում են աշխատանքի եւ սոցիալական ապահովության նախարարությանը, նրանց նկատմամբ կիրառվում են երկրից վտարման անհրաժեշտ բոլոր միջոցառումները:

Հ. Ղ.

Ամերիկա-հրդական բարեկամության խումբ Ներկայացուցիչների պալատում

Երեկ այդ մասին պատշաճաբար հայտարարվել է ԱՄՆ Կոնգրեսի շենքում կազմակերպված ընդունելությանը, որին մասնակցել են Հյուսիսային Իռլանդիայի Քրտդիսան շրջանի վարչապետ Նեյիրվան Բարզանին եւ Ներկայացուցիչների պալատի մի շարք անդամներ: CNN-Turk-ի տվյալներով, ԱՄՆ Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատում ձեւավորված ամերիկա-հրդական բարեկամության խմբի համանախագահի պատշաճները սահմանել են պալատի դեմոկրատ անդամ Լինկոլն Դեյվիսն ու հանրապետական Ջո Ուիլսոնը: Նրանք ամերիկա-հրդական բարեկամության խմբին միանալու կոչ են արել Ներկայացուցիչների պալատի մյուս անդամներին:

Այդ ընթացքում Նայիրան Բարզանին խմբի ստեղծումը որակել է «պատմական իրադարձություն»: Ի դեմ, մայիսի 21-ից Վաշինգտոնում բանակցություններ վարող Բարզանին ընդունելությունից առաջ հանդիպել է ԱՄՆ պատգամավորության նախագահ Ռոբերտ Գեյթսի եւ նախագահի ազգային անվտանգության գծով խորհրդական Սթիվեն Հեդլիի հետ: Նա մինչ այդ հանդիպել էր դեմոկրատ սենատորներ Ջո Բայդենին եւ Ջո Լիբերմանին, իսկ հանրապետականներից՝ Սեմ Բրաունբեքին եւ Հարոլդ Բիրմանին, որը Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահն է:

Հ. Ղ.

Ռ. Գեյթս. «Իրանում երկար ենք մնալու»

ԱՄՆ պատշաճաբար նախարար Ռոբերտ Գեյթսը հայտարարել է, որ ամերիկացի զինծառայողները դեռ երկար են մնալու Իրաքում եւ Աֆղանստանում: Նրա խոսքերով, միայն ամերիկացի հատուկ ներկայացուցիչների թիվը Ներկայումս Իրաքում կազմում է 5 հազար, Աֆղանստանում՝ 3 հազար:

«Լոս Անջելես թայմս» թերթը մեջբերում է Պենտագոնի ղեկավարի հետեւյալ խոսքերը. «Նրանք երկար ժամանակ այնտեղ կմնան որպես ահաբեկիչներին որսացող եւ սպանող ուժ, ինչպես նաեւ իրաքցիներին եւ աֆղանցիներին մարզող ուժ»:

Նախարարն իր հայտարարությունն արել է Տամպայում (Ֆլորիդայի նահանգ) գտնվող հատուկ նշանակության զորքերի կենտրոնակայանում: Գեյթսի կարծիքով, Իրաքից ամերիկյան զորքի հարձեռ դուրսբերումը «կարող է քանկ նստել»:

Պատճառաբանելով «Ալ Ղաիդայի» «մահաբեր ուժ, քաղաքեղային ուռուցք» լինելը, Պենտագոնի ղեկավարն ասել է, որ զինված գրոհայիններն առաջվա պես «խարխլում են օրենքի իշխանությունը, իսկ Իրաքի կառավարությունը դեռ շատ բան պետք է սովորի սեփական ժողովրդի անվտանգությունը պատշաճելու համար»:

Թուրքիայի կառավարությունը ընդդեմ խոզերի

Ողբերգական լուրեր են հասնում Մոսկվա Թուրքիայից: Իսլամիստական կառավարությունը պատերազմ է հայտարարել... խոզերին: Ավելի ճիշտ՝ խոզի մսին ու դրանից պատրաստված ուտեստներին:

Աշխարհիկ Թուրքիայում խոզերի նկատմամբ վերաբերմունքը դեռ վերջերս հանդուրժողական էր, հատկապես Սամբուլում գործում էին խոզի մսի խանութներ: Դասական իսլամը դա այնքան էլ մեծ մեղք չէր համարում: 70-ական թվականներին Սամբուլն սկսեցին լցել հույներն ու հայերը, պահանջարկը նվազեց:

Սակայն իսկական հակախոզային պատերազմը սկսվել է չորս տարի առաջ: Իզմիրի ռեստորաններից մեկում մոտ 40 մարդ թունավորվել են խոզեղենից: Կոմի գործերով նախարարությունը, օգտվելով առիթից, վայնասուն է բարձրացրել, պահանջելով առհասարակ արգելել խոզի մսի «արդյունաբերությունը»: Ավելին, երբ կառավարության ականջին լուրեր են հասել, որ որոշ «զայրույթ» թուրքական ճաշատեսակներում խոզի մսի է օգտագործվել, նա փակել է տվել երկու տասնյակից ավելի խոզաբուծական ֆերմաներ, բառացիորեն կյանքի իրավունքից զրկելով հարյուրավոր անմեղ ու անվնաս կենդանիների:

Խոզաբույծ ու խոզասեր անձինք հուսահատության մեջ են Թուրքիայում: Եթե արգելման գործին լծվել է իսլամիստական վերնախավը, ապա փրկության շանսերը նվազագույնն են:

Միգուցե եվրոմիությունը միջամտի: Թե՞ դա չի մտնում դեմոկրատիայի սկզբունքների մեջ:

Ռ. Հ.

Կյանքի մարդը՝ Բենիկ Պետրոսյան

Եվ խոսեց մեսաղը

«Ունենք միջնադարյան մանրանկարչություն, ինչու չունենք նաեւ մանրաֆանդակի դպրոց: Անչափ կուզենայի, որ Երեւանում բացվի մանրաֆանդակի միջազգային կենտրոն, եւ թող ստեղծագործական ժառանգությունս հիմք ծառայի հետագայի համար:

Հայ ժողովրդի զավակները կարող են օգտվել իմ թողած ժառանգությունից: Ստեղծեցի 500-ից ավելի ձուլածո եւ քառե մանրաֆանդակ»:

Բենիկ Պետրոսյանին ընկերներն ու արվեստագետները, ընդհանրապես բոլոր նրան ճանաչողները համարում են կյանքի մարդ ու արտահայտվում, ասելով՝ մեր Բենոն, մեր Բենիկը: Նույնկերպ խոսեցին նրա մասին երեկ Ազգային պատկերասրահում բացված ցուցահանդեսին ներկայացած բազմաթիվ արվեստագետներ:

«Բենիկը թողեց ժառանգություն, բայց ահռելի չօգտագործված պոտենցիալով գնաց», կարծիք հայտնեց արվեստաբան **Հենրիկ Իգիթյանը** եւ կոչեց անգամ կարտերեց հանդեսագործի ավանդի իրականացումը: Ազգային պատկերասրահի տնօրեն **Փարավոն Միրզոյանն** էլ ընդգծեց, «Մեր Բենիկը հիանալի արվեստագետ է ու մեծ հանդեսագործ: Սա հայենի ճշմարտություն է»: Խոսեցին շատերը ասելիքի նույնությամբ, իսկ ամենից ազդեցիկ ասելիքը հենց ցուցահանդեսն էր, որ բավական դժվար էր դիտել՝ բազմությունը 3 տահերում էլ հոծ էր, ինչը նույնպես հանդեսագործի արվեստի հանդեպ հետաքրքրության արտացոլ է:

Թեմաթիկ ընդգրկունություն ունեցող ցուցահանդեսում ներկայացված էին համամարդկայինից մինչեւ կենցաղայինը պատմող հանդեսներ: «Դեր-Զորի ճանապարհից վերադարձ չկա» հանդեսից է սկսվում ցուցադրությունը եւ անցնում պատմական այլ փուլերի անդրադարձող հանդեսների: Բենիկ Պետրոսյանի «Սովետ Միությունը» վանդակված զինվորական համազգեստն է՝ նույն վանդակից կախված՝ առանց կողի եւ ազատության, թե՞ ցավի ճիչ արձակող թռչունը, որ ձգտում է ազատվել վանդակից, հաջողություն է «Ողբերգությունը մայրը», «Փախստական կինը» հանդեսներով: Այնուհետեւ անհատի ամենատարբեր հոգեբանական հանդեսային դրսեւորումներն են ներկայացված ինքնաշոշի ու գեղեցիկի երջանկում կատարված: «Գլուխ լվացող աղջկա» անշարժացած կեցվածքում լիովին առկա է շարժումը, իսկ «Դրախտի խնձորներն» ուղղակի խնձորի հանդեսակ չեն, այլ սիրազարդ զույգերի տարածք, որ հետաքրքրությամբ, իսկ ամենից ազդեցիկ ասելիքը հենց ցուցահանդեսն էր, որ բավական դժվար էր դիտել՝ բազմությունը 3 տահերում էլ հոծ էր, ինչը նույնպես հանդեսագործի արվեստի հանդեպ հետաքրքրության արտացոլ է:

Թեմաթիկ ընդգրկունություն ունեցող ցուցահանդեսում ներկայացված էին համամարդկայինից մինչեւ կենցաղայինը պատմող հանդեսներ: «Դեր-Զորի ճանապարհից վերադարձ չկա» հանդեսից է սկսվում ցուցադրությունը եւ անցնում պատմական այլ փուլերի անդրադարձող հանդեսների: Բենիկ Պետրոսյանի «Սովետ Միությունը» վանդակված զինվորական համազգեստն է՝ նույն վանդակից կախված՝ առանց կողի եւ ազատության, թե՞ ցավի ճիչ արձակող թռչունը, որ ձգտում է ազատվել վանդակից, հաջողություն է «Ողբերգությունը մայրը», «Փախստական կինը» հանդեսներով: Այնուհետեւ անհատի ամենատարբեր հոգեբանական հանդեսային դրսեւորումներն են ներկայացված ինքնաշոշի ու գեղեցիկի երջանկում կատարված: «Գլուխ լվացող աղջկա» անշարժացած կեցվածքում լիովին առկա է շարժումը, իսկ «Դրախտի խնձորներն» ուղղակի խնձորի հանդեսակ չեն, այլ սիրազարդ զույգերի տարածք, որ հետաքրքրված այնքան փակ է մինչեւ խնձորը բացելը:

Ինչպես ինքը՝ Բենիկ Պետրոսյանն է ասել, «Ուզում էի սիրել, որ մեսաղը խոսի»: Եվ մեսաղը խոսեց հանդեսագործի ստեղծարար պարտադրանքով: Այն կգրուցի Ազգային պատկերասրահում երեկ բացված ցուցահանդես այցելողի հետ: Առա մնել-դուրս գալիս էլ այցելուն կտեսնի ու կլսի իր մասին՝ երեւանը եւ երեւանցիները շարից «Հանդիսատեսը» դիտելիս: Ցուցահանդեսն անհասկանալի չէ, այլ ընտանեկան՝ Բենիկ Պետրոսյանի գործերի կողքին ներկայացված են նաեւ զավակների՝ գեղանկարիչ Արեւիկ եւ հանդեսագործ Արեգի աշխատանքները, թոռան՝ 5-ամյա Տիգրանի 3 աշխատանք էլ տեղ է գտել սրահում:

Ու թե հանդեսագործի ավանդն անկասար է Հայաստանում մանրահանդեսի միջազգային կենտրոն ստեղծելու առումով եւ միայն առիթից առիթ որոշես մտահոգություն է բարձրաձայնվում, արդեն նրա ժառանգությունից հայրենիքի օգտվելու առումով՝ չանտեսված: Արեգը՝ Բենիկ Պետրոսյանի որդին, հենց նրա ստեղծագործություններով զբաղվելով, սովորում ու իր յուրովի մատուցված գործերն է ստեղծում:

ՆԱՆԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հաղթանակ, թե՞ դրա իմիտացիան

Ձայնային շոուբիզ

Ռուսական փուլի եռաժեստության ակնառու դեմքերից մեկը Վալերի Մելյաձեն «Սե լա վի» կոչվող երգում հետեւյալ բառերն է ինչեցնում. «Հաղթողը ճիշտ կլինի/ Պատկվողն՝ ընդամենը կարդի»: Վրացի սիրելի երգչի տրամաբանությամբ եվրատեսիլում հանդես եկող մեր առավել շատ սիրելի ու հոգեհարազատ երգչուհուն՝ Սիրուսոյին կուզենայի հետեւյալ հարցերը տալ. «Սիրուսո ջան, դու իսկապե՞ս լավ երգեցիր եվրատեսիլ 2008-ի առաջին համերգի ժամանակ: Դու հաղթեցի՞ր այդ մրցույթում, թե՞ SMS խելահեղությամբ առաջադեցիր, թե որտեղ են սիմուտոմում կարտել քեզ»: Թվում է, թե չկամ լրագրողի հարցեր են, կամ մանում՝ ուբերոդ համարի տակ եվրատեսիլի եզրափակիչ համերգում հանդես գալու համենատությամբ: Բայց միայն թվում է, քանի որ մենք նույն փասան արձանագրեցինք անցյալ տարի «Մանկական եվրատեսիլում», երբ մեր երեխաները հուզմունքից սխալ երգեցին, բայց մենք միայն ծափահարեցինք նրանց, առանց հիշեցնելու, որ լավից էլ լավ կարող էին եւ երգել էին մինչ այդ: Դրանից հետո ե՛ւ «Արեւիկի», ե՛ւ Սիրուսոյի հետագա իսկական հաղթանակներին ավելի քիչ եմ հավատում, քանի որ թվացյալ ինքնախաբեությունն ամենավտանգավորն է: Ասել է, թե՝ սուտ, որը գոնե ազնիվ մարդու համար պատրությունից էլ վատ բան է: (Պարտվել կարելի է նաեւ արժանապատվորեն, իսկ սուտը միշտ էլ անպատիվ է): Անձնապես չեմ ճանաչում մեր գեղեցկուհուն, բայց հարցազրույցներից ու ելույթներից նա թողնում է նրբազգաց ու ազնիվ աղջկա տպավորություն: Ու երեւի դա է պատճառը, որ ուզում եմ հրապարակային անկեղծության գնալ իմ բազմաթիվ ասկերտների կողմի հետ: Հավատացնում եմ, խնդիրս նրան վիրավորելը չէ, այլ ավելի կարեւոր բան լսելն ու տեսնելը, քան նրա կատարած երգն ու ողջ եվրոպայի ծափերն են: Դա մտավորականի, արվեստագետի պարզ ու օրինակելի կերպարն է, խոհեմ հայուհու ազնվությունն ու ճիշտ դիտողությունը, արվեստի բարձունքն ի վեր մագլցողի պրոֆեսիոնալ ու գրագետ հավակնը, որ կոչվում է նաեւ ճիշտ, ազնիվ ինքնագնահատական: Իրոք, որ միայն դա է մոտեցնում իրական եւ վաստակած հաղթանակի դափնեպսակը:

Տեսական այս փայլփլուն ողջ շոուի, եռամսյա պրոմոտուրի, ողջ աշխարհն ու հատկապես սփյուռքն ու Հայաստանը «մշակութային եռուզեռի» մեջ պահելու հնարամտությունն ու երեւակայությունը արդեն չէին ենթադրում, որ Սիրուսոն, ինչպես եւ անցյալում Անդրեն (Հայկոյի ելույթը չեմ տեսել), հուզվելու է եւ առաջին իսկ նոտաներից մինչեւ գեղանի մարմինը կտրուկ դարձդարձելը, պարելու է իր արտիստական ողջ հմայքը ոչ հօգուտ գեղագիտական հաղթանակի:

Սիրուսոյի ելույթը հնարավոր կլիներ համարել արժանապատիվ պարտություն եւ գործնական եզրակացությունների առիթ, եթե հայ ունկնդրին խուլ անճաշակի տեղ չդներ նախ՝ եվրատեսիլի հայաստանյան մենաբան Ֆելիխ Խաչատրյանը, ապա՝ «Հայլուսը», որը գովվեց եր անում Սիրուսոյի կատարման, շատ հմտորեն մոնտաժելով այն բոլոր հատվածները, երբ երգչուհին ոչ թե կատարում էր երգը, այլ իրեն ու միլիոնավոր հանդիսատեսներին (այդ թվում եւ «Հայլուսի» լրագրողին ու Ֆ. Խաչատրյանին) ապացուցում, որ ինքը չափազանց հուզված է:

Մի կոտ, բայց խոսուն անեկդոտ հիշեցի: Հարց. «Ինչո՞վ է տարբերվում առնետը դատաստանից»: Պատասխան. «PR-ով»: Թերեւս Սիրուսոյի պրոդյուսերական անձնակազմը այս անեկդոտին առավել է հակված, քան Վ. Մելյաձեի երգի տողերին, առանց հաշվի առնելու, այն հանգամանքը, որ լսարանի լայն ընդգրկվածությունը, «Քելե, քելե»-ի տարածվածությունը, անգամ Սիրուսոյի պրոֆեսիոնալի համբավը ոչինչ են ճշմարիտ գնահատականի եւ ազնվության համեմատությամբ, որ մեր օրերում կարծես այնքան էլ մոդայիկ որակ չէ: Մինչդեռ, այն հոգեպես առողջ եւ ուժեղ, հաղթող սերնդի դաստիարակության առաջին եւ գեղագույն նախապայմանն է:

Իսկ ինչ մնում է «Եվրատեսիլին», կարելի է մշակութային այս մեծ խաղից ամենակարեւոր դասը քաղել՝ հայկական շոուբիզնեսը (չշփոթել դասական եզակի արվեստագետների հետ) չի կարողանում գրավել եվրոպական մեծ բեմերը մի պարզ ու միամիտ պատճառաբանությամբ՝ բեմական արվեստը ձայնազուրկ-ականջազուրկ է դառնում եւ հենց բեմի վրա սկսում է կաղալ երկու ոտով, երբ հանդիսատեսի թիվն անցնում է 1000-ից:

ԼԻԼԻ ՄԱՐՈՅԵՆ

«Ռուսական մշակույթի սեզոններ» մայիսի 23-ին

«Ազգը» իր ընթերցողներին արդեն տեղեկացրել է ՀՀ մշակույթի նախարարության եւ ՌԴ մշակույթի կինեմատոգրաֆիայի դաշնային գործակալության միջեւ 2008-ին Հայաստանում կայանալիք «Ռուսական մշակույթի սեզոնների» կազմակերպման եւ անցկացման մասին:

Մշակութային սեզոնը մայիսի 21-28-ը կբացվի Մոսկվայի «Պյոտր Ֆոմենկոյի արվեստանոց» թատրոնի հյուրախաղերով: Այդ օրերին հայ թատրասեր հասարակայնությանը կներկայացվի Լեւ Տոլստոյի՝ «Ոսկե դիմակի» եռակի մրցանակակիր «Պատերազմ եւ խաղաղություն: Վերջի սկիզբը: Տեսարաններ» ներկայացումը (մայիսի 23, 24-ին Գ. Սունդուկյանի անվ. թատրոն) եւ «Ընտանեկան երջանկություն» պիեսը (մայիսի 26, 27-ին Սանքիսլավսկու անվ. թատրոն), որն ընդգրկվել է 20-րդ դարի համաշխարհային 100 լավագույն թատերական բեմադրությունների ցանկում:

1988-ին Պյոտր Նաումովիչ Ֆոմենկոն իր ուսումնական արվեստանոցում հավաքում է ուսանողական թատերախումբ ու հինգ տարի անց ակնհայտ է դառնում Ֆոմենկոյի թատրոն-արվեստանոցի ծնունդը: Այսօր թատրոնում, ինչպես երեկ ՀՀ մշակույթի նախարարությունում ասուլիսի ժամանակ նշեց թատրոնի տնօրեն Անդրեյ Վորոբյովը, կողք կողքի ստեղծագործում են 3 սերնդի 32 դերասան եւ 5 ռեժիսոր՝ միավորելով փորձարարության, որոնումի ձգտումն ու ռուսական խաղացանկային թատրոնի ավանդույթները նոր թատրոնի նոր մտածողությամբ: Թատրոնն իր գործունեության ընթացքում թատերասերների դատին է հանձնել 29 բեմադրություն, որոնցից շատերը դարձել են ազգային թատերական «Ոսկե դիմակ», «Բյուրեղապակյա Տուրանդոտ», «Ոսկե Վիսյազ», «Թատերաբերջանի մեխը», «Ճայ» եւ այլ թատերական ու պեսական մրցանակների:

Թատերախումբը տարբեր տարիների մասնակցել է Ավինյոնի, Լեհաստանի, Վենետիկի, Բելգրադի, Գերմանիայի, Կոլումբիայի, Հունաստանի թատերական միջազգային փառատոներին, աշխարհի տարբեր անկյուններում հանդես եկել հյուրախաղերով:

«Պյոտր Ֆոմենկոյի արվեստանոց» մոսկովյան թատրոնի հայաստանյան հյուրախաղերի գլխավոր գործընկերն է Հայաստանի թատերական գործիչների միությունը, իսկ գլխավոր հովանավորը՝ ՎՏԲ բանկը:

ՀԹԳՄ նախագահ Հակոբ Ղազանչյանը ասուլիսի ընթացքում ներկայացնելով թատրոնի պատվիրակությանը, գնահատանքի խոսքեր ասաց թատրոնի անցած ուղու եւ նրա կարեւոր դերակատարության մասին: Երկու երկրների միջեւ մշակութային երկխոսության զարգացումների կոնկրետ ծրագրային դրսեւորումն է երեւանում անցկացվող Մոսկվայի թատրոնի հյուրախաղերը եւ ՀԹԳ միությունը ջանք չի խնայել, որ դրանք կայանան:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մոսկովյան «Կարոտը» շարունակական կլինի

Մայիսի 13-ից սկսած՝ 7 օր շարունակ Մոսկվայում հայկական մշակույթի ներկայացման ընթացք է: Տեղի է ունենում հայկական միջազգային «Կարոտ» փառատոնը՝ ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի օրհնությամբ եւ մի շարք կազմակերպությունների՝ գլխավորապես հայկական մշակույթի զարգացման հիմնադրամի ջանքերով: «Կարոտը» մեկտեղել է հայաստանաբնակ, այլ երկրներում ապրող հայ եւ օտարազգի արվեստագետներին բեմում, արվեստասեր հասարակությանը՝ դահլիճում: Մեկ շաբաթ ամենատարբեր միջոցառումներով կազմակերպիչները կարողացել են տոնականություն ստեղծել մասնակիցների համար՝ ներկայացնելով հայկական մշակույթի ընդգրկուն ծրագիր:

Մաքետսյանը, Ռաիսա Մկրտչյանը, Մարտին Վարդազարյանը, Իոսիֆ Կոբզոնը, Աննա Մայիլյանը, Արամոն, Էմմա Պետրոսյանը, Սամվել Երվինյանը, Վլադիսլավ Օլխովսկին, Դանիել Դեկկերը եւ շատ ուրիշներ՝ Միացյալ Նահանգներից, Գերմանիայից, Ֆրանսիայից, Մոլդովայից եւ այլ երկրներից:

Վլադիմիր Աբաջյանը, Վլադիմիր Մարյանը, Գուժ Մանուկյանը, Միլվա Յուզբաշյանը, Ազաս Գասպարյանը, Հովհաննես Բաբախանյանը նույնպես մասնակցել են փառատոնին, ներկա են գտնվել Արմեն Ձիգարխանյանը, Լեւ Դուրովը եւ այլք: Տարբեր անվանակարգերում «Կարոտի» դափնեկիրները հոկտեմբերի հասած, վաստակաշատ 12 անձինք են՝ Նիկիտա Սիմոնյան, Շավարշ Կարապետյան, Պերճ Ձեյրունյան, Սոս Սարգսյան... Փառատոնի ընթացքում հայկական մշակույթը ներկայացվել է համակողմանիորեն՝ հատկապես երգարվեստում:

«Կարոտի» բացման արարողության ընթացքում ՌԴ մշակույթի նախարար **Ալեքսանդր Ավդեեւը** ողջույնի խոսքում կարտերել է փառատոնը, այն համարելով եւ մի գործուն քայլ երկու երկրների կապերի խորացման ճանապարհին: «Կարոտի» կազմկոմիտեի նախագահ, ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանն** էլ համակարծություն է հայտնել ու տեղեկացրել, որ կազմակերպիչները շահագրգիռ են փառատոնը շարունակական՝ ամենամյա դարձնելու հարցում:

ԱԶԳ Մարզական

www.azg.am www.azgdaily.com www.azgdaily.eu

«Մանչեսթր Յունայթեդը» եռակի գավաթակիր

«Մանչեսթր Յունայթեդն» իր պատմության մեջ 3-րդ անգամ դարձավ չեմպիոնների գավաթակիր՝ Մոսկվայում դրամատիկ պայքարում, 11 մ հարվածների օգնությամբ պարտության մատնելով Լոնդոնի «Չելսիին»: Առաջին խաղակեսում ավելի ակտիվ էին Ալեխ Ֆերգյուսոնի սանները, որոնց էլ հաջողվեց առաջինը բացել հաշիվը: 26-րդ րոպեին աչի ընկավ չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկու Քրիստիանու Ռոնալդոն: Նա եւս երկու անգամ կարող էր գրավել մրցակցի դարպասը, սակայն չստացվեց: Իսկ ահա «Չելսին» ընդմիջման գնալուց առաջ վերականգնեց հավասարակշռությունը: Գոլի հեղինակը Ֆրենկ Լեմփարդն էր: Ընդմիջումից հետո հաջողությանն ավելի մոտ էր «Չելսին», սակայն Դիոլե Դրոգբայի հարվածը դիպավ ձողին: Իսկ լրացուցիչ ժամանակում էլ Լեմփարդի հարվածից հետո «Մանչեսթր Յունայթեդին» գոլից փրկեց հորիզոնական ձողը: Մի դրվագում էլ «Չելսիի» ավագ Ջոն Թերին դասակ դարպասից հեռացրեց Ռայան Գիգգի հարվածած գնդակը:

Չեմպիոնների գավաթի բախտը վճռեցին 11 մ հարվածները: Վճռորոշ եղավ 14-րդ հարվածը Նիկոլա Անելկայի կատարմամբ: «Մանչեսթր Յունայթեդի» հոլանդացի դարպասապահ Էդվին վան դեր Սարը հիանալի գոռեց ու հետ մղելով գնդակը, իր թիմին մեծ նվաճման հասցրեց:

Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ալեխ Ֆերգյուսոն («Մանչեսթր Յունայթեդ»)- Կարծում եմ, ճակատագիրը բարեհաճ էր մեր հանդեմ, ինչպես ողջ մրցաշրջանում, այնպես էլ այսօր: Մենք նվիրական նպատակ ունենք եւ մեզ դժվար էր կանգնեցնել: Ճակատագիրը մեր կողմն էր, երբ Ջոն Թերին 11 մ իրացնելիս սայթաքեց: Մարզական իմ կարիերայում դեռ երբեք չէր հաջողվել գավաթակիր դառնալ 11 մ հարվածաշարի օգնությամբ: Երբեմն անգամ պարտվել եմ «Աբերդինում», երբեմն անգամ՝ «Մանչեսթր Յունայթեդում», չհաշված Անգլիայի Սուպերգավաթը: Այնպես որ, սա առաջին հաջողված դեպքն է: Արդյունքից գոհ եմ: Երբ Թերին սայթաքեց, մտածեցի, որ անպայման կիաղթենք: Շատ հույս եւ ուրախ եմ, որ մենք կրկին հաղթեցինք: Սակայն հաղթանակը երկար տոնել չեմ պատրաստվում: Արդեն վաղը կսկսեմ մտածել նոր մրցաշրջանի մասին:

Ավրամ Գրանտ («Չելսի»)- Հպարտանում եմ թիմովս ու այն նվաճումներով, որոնց հասանք այս մրցաշրջանում: Այս մասին հանդերձարանում ասել եմ ֆուտբոլիստներին: Այսօր մեր թիմը խաղադաշտում լավագույնն էր: Մենք պետք է հաղթեինք: Ջոն Թերին շատ տխուր էր, համարյա լաց էր լինում: Սակայն ավելի շատ նրա շնորհիվ ենք մենք այսօր Մոսկվայում: «Չելսիի» համար դժվար մրցաշրջան էր, իսկ Թերին օգնում էր թիմին: Նա բարձակարգ ֆուտբոլիստ է, իսկական ավագ: Այսօր նա հիանալի խաղաց: Ֆուտբոլիստները կարող են այլեւս չանհանգստանալ թիմում իրենց տեղի համար: Իմ ապագայի մասին ոչինչ ասել չեմ կարող: Գիտեմ միայն, որ առաջիկա օրերին լավ տրամադրություն չեմ ունենա:

Ֆանակով հավասարվեցին իտալացիներին ու իսպանացիներին: Այս երկրների ներկայացուցիչները 11-ական անգամ դարձել են չեմպիոնների գավաթակիր: 6-ական անգամ հաջողությունն ուղեկցել է Հոլանդիայի եւ Գերմանիայի ակումբներին, չորս անգամ՝ պորտուգալացիներին: Մեկական անգամ գավաթակիր են դարձել Ֆրանսիայի, Հարավսլավիայի, Ռումինիայի եւ Շոտլանդիայի թիմերը:

Թիմերից յուրօրինակ ռեկորդակիր Մադրիդի «Ռեալն» է, որը 9 անգամ նվաճել է մրցանակը: Ընդ որում մրցանակի առաջին հինգ խաղարկություններում «Ռեալը» ոչ մեկին չի զիջել գավաթը: Վերջին անգամ «Ռեալը» գավաթակիր է դարձել 2002-ին: 7 անգամ հաջողությունն ուղեկցել է «Միլանին»: «Լիվերպուլը» հնգակի, «Բավարիան» ու «Այաքսը»՝ քառակի գավաթակիրներ են: Ընդ որում վերջին երկուսը 3 տարի անընդմեջ նվաճել են մրցանակը: «Մանչեսթր Յունայթեդի» ցուցանիշը 5-րդն է:

Չեմպիոնների գավաթի դափնեկիրները

1956-1960	Ռեալ
1961-1962	Բենֆիկա
1963	Միլան
1964-1965	Ինտեր
1966	Ռեալ
1967	Սելտիկ
1968	Մանչեսթր Յուն.
1969	Միլան
1970	Ֆեյենուրդ
1971-1973	Այաքս
1974-1976	Բավարիա
1977-1978	Լիվերպուլ
1979-1980	Նոթինգհեմ Ֆորեստ
1981	Լիվերպուլ
1982	Ասթոն Վիլլա
1983	Համբուրգ
1984	Լիվերպուլ
1985	Յուվենտուս
1986	Սպարտա
1987	Պորտո
1988	Էյնդհովեն
1989-1990	Միլան
1991	Ցվենա Զվեզդա
1992	Բարսելոն
1993	Մարսել
1994	Միլան
1995	Այաքս
1996	Յուվենտուս
1997	Բորուսիա Դ.
1998	Ռեալ
1999	Մանչեսթր Յուն.
2000	Ռեալ
2001	Բավարիա
2002	Ռեալ
2003	Միլան
2004	Պորտո
2005	Լիվերպուլ
2006	Բարսելոն
2007	Միլան
2008	Մանչեսթր Յուն.

Ֆրեզերը որոշել է վաճառել մարզասրահը

Ամերիկացի հանրահայտ պրոֆեսիոնալ բոքսիմարտիկ Ջո Ֆրեզերը որոշել է Ֆիլադելֆիայի հյուսիսում գտնվող բոքսիմարտի մարզասրահը վաճառի հանել: Մոտ մեկ դար առաջ կառուցված մարզասրահի գինը 2,4 մլն դոլար է: Մոտ մեկ ամիս առաջ այն փակվել էր, որպեսզի վերանորոգվի:

Անցած տարվա աշնանը Ֆիլադելֆիայի իշխանությունները դասական հայց էին ներկայացրել Ֆրեզերի դեմ՝ պահանջելով վճարել 127 հազար դոլարի հասնող հարկերը: Այս տարվա մարտին Ֆրեզերը փակել էր պարտը, սակայն նա այլեւս ի վիճակի չէ հոգալ մարզասրահի շահագործման ծախսերը, ուստի որոշել է վաճառել այն:

Ջո Ֆրեզերը մարզական հարուստ կենսագրություն ունի: Մարզական կարիերայի սկզբում նա մեկը մյուսի հետեւից պարտության էր մատնում մրցակիցներին, մինչեւ որ հանդիպեց Բասեր Մասիսի հետ: Վերջինս հաղթեց Ֆրեզերին եւ իրավունք ստացավ մասնակցելու 1964-ի Տոկիոյի օլիմպիադային: Սակայն Մասիսին վիճակված չէր օլիմպիական ոսկե մեդալը նվաճել բոքսիմարտի մրցաշրջանում: Եզրափակիչում նա պարտության մատնեց գերմանացի Հուբերին:

ԸՆՏՐՈՎԱԾ ՄՐՑԱՇՐՋԱՆ

Կոպիտ սխալների տխուր հետեւանքը

Երեկ Աբուդաբիում կայացած Հայաստանի եւ Թուրքիայի պատանեկան հավաքականների մրցավեճով մեկնարկեց Ֆուտբոլի Եվրոպայի մինչեւ 19 տարեկանների ընտրական մրցաշարի էլիտար փուլի 7-րդ խմբի մրցույթարը: Չորս հավաքականներ սկսեցին պայքարը Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի միակ ուղեգրի համար:

Թուրքերի հետ խաղում 33 հավաքականի կազմում ուրախագրվման պատճառով հանդես չէին գալիս էդգար Մալարյանը, Սարգիս Կարապետյանն ու Հեմրիխ Մխիթարյանը: Հատկապես վերջինիս բացակայությունը զգալի կորուստ էր մեր հավաքականի համար, որն այնուամենայնիվ ակտիվ սկսեց հանդիպումը: Արդեն 2-րդ րոպեին Տիգրան Ոսկանյանը կարող էր բացել հաշիվը, սակայն հարվար դիրքից վրիպեց: Իսկ ահա թուրքերը բավական կազմակերպված էին գործում, հատկապես ակտիվորեն էին գրոհում աջ թեւից, որտեղից էլ 9-րդ րոպեին Յիլդիրիմը գրավեց Պրազյանի պատճառած դարպասը:

Մեր հավաքականի խաղը չէր սազվում: Հայ ֆուտբոլիստները հաճախ էին սխալվում պարզ իրադրություններում, գրոհներն անավարտ էին մնում: Թվում էր, թե մինչեւ ընդմիջումը հետո հաջողությանն ավելի մոտ էր «Չելսին», սակայն Դիոլե Դրոգբայի հարվածը դիպավ ձողին: Իսկ լրացուցիչ ժամանակում էլ Լեմփարդի հարվածից հետո «Մանչեսթր Յունայթեդին» գոլից փրկեց հորիզոնական ձողը: Մի դրվագում էլ «Չելսիի» ավագ Ջոն Թերին դասակ դարպասից հեռացրեց Ռայան Գիգգի հարվածած գնդակը:

Չեմպիոնների գավաթի բախտը վճռեցին 11 մ հարվածները: Վճռորոշ եղավ 14-րդ հարվածը Նիկոլա Անելկայի կատարմամբ: «Մանչեսթր Յունայթեդի» հոլանդացի դարպասապահ Էդվին վան դեր Սարը հիանալի գոռեց ու հետ մղելով գնդակը, իր թիմին մեծ նվաճման հասցրեց:

Խաղից հետո մարզիչները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ալեխ Ֆերգյուսոն («Մանչեսթր Յունայթեդ»)- Կարծում եմ, ճակատագիրը բարեհաճ էր մեր հանդեմ, ինչպես ողջ մրցաշրջանում, այնպես էլ այսօր: Մենք նվիրական նպատակ ունենք եւ մեզ դժվար էր կանգնեցնել: Ճակատագիրը մեր կողմն էր, երբ Ջոն Թերին 11 մ իրացնելիս սայթաքեց: Մարզական իմ կարիերայում դեռ երբեք չէր հաջողվել գավաթակիր դառնալ 11 մ հարվածաշարի օգնությամբ: Երբեմն անգամ պարտվել եմ «Աբերդինում», երբեմն անգամ՝ «Մանչեսթր Յունայթեդում», չհաշված Անգլիայի Սուպերգավաթը: Այնպես որ, սա առաջին հաջողված դեպքն է: Արդյունքից գոհ եմ: Երբ Թերին սայթաքեց, մտածեցի, որ անպայման կիաղթենք: Շատ հույս եւ ուրախ եմ, որ մենք կրկին հաղթեցինք: Սակայն հաղթանակը երկար տոնել չեմ պատրաստվում: Արդեն վաղը կսկսեմ մտածել նոր մրցաշրջանի մասին:

Ավրամ Գրանտ («Չելսի»)- Հպարտանում եմ թիմովս ու այն նվաճումներով, որոնց հասանք այս մրցաշրջանում: Այս մասին հանդերձարանում ասել եմ ֆուտբոլիստներին: Այսօր մեր թիմը խաղադաշտում լավագույնն էր: Մենք պետք է հաղթեինք: Ջոն Թերին շատ տխուր էր, համարյա լաց էր լինում: Սակայն ավելի շատ նրա շնորհիվ ենք մենք այսօր Մոսկվայում: «Չելսիի» համար դժվար մրցաշրջան էր, իսկ Թերին օգնում էր թիմին: Նա բարձակարգ ֆուտբոլիստ է, իսկական ավագ: Այսօր նա հիանալի խաղաց: Ֆուտբոլիստները կարող են այլեւս չանհանգստանալ թիմում իրենց տեղի համար: Իմ ապագայի մասին ոչինչ ասել չեմ կարող: Գիտեմ միայն, որ առաջիկա օրերին լավ տրամադրություն չեմ ունենա:

Հաղթողը որոշվեց լրացուցիչ մրցախաղում

Վերջնագիծը հասեց շախմատի ԱՄՆ-ի առաջնությունը, որի մասնակիցների թվում էին հայազգի չորս շախմատիստներ: Տղամարդկանց մրցաշարում չեմպիոնի տիտղոսը նվաճեց Յուրի Շուլմանը, որը 9 հնարավորից վաստակեց 7 միավոր: Ավարտական տուրում նա ոչ-ոքի խաղաց Ջորջ Ֆրիդելի հետ: Երկրորդ մրցանակիր դարձավ Ալեխանդր Օնիշչուկը, որը հաղթողից հետ մնաց կես միավորով: Նա 9-րդ տուրում պարտության մատնեց Յոհան Ֆրոդոովիչին: Բրոնզե մեդալը բաժին հասավ Սերգեյ Կուդրինին, որը հաշտություն կնքելով Եվգենի Պերելշտեյնի հետ, վաստակեց 6 միավոր: Կարուժան Հակոբյանը 5,5 միավորով Պերելշտեյնի եւ Ֆրիդելի հետ բաժանեց 4-6-րդ տեղերը: Ավարտական տուրում նա ոչ-ոքի ավարտեց պարտիան Խուլիո Բեսերայի հետ:

Կանանց մրցապայքարում չեմպիոնուհու կոչման համար ավելի թեժ մրցավեճ ծավալվեց: Ոսկե մեդալի գլխավոր հավակնորդներն էին Իրինա Կրաշը եւ Աննա Զատոնսկին: Կրաշն ավարտական տուրում ոչ-ոքի ավարտեց պարտիան Կատերինե Ռոհանյանի հետ, իսկ ահա Զատոնսկին հաղթեց Տսագան Բաթերսեգին: Արդյունքում երկու շախմատիստուհիներն էլ վաստակեցին 7,5-ական միավոր: Չեմպիոնուհուն որոշելու համար նրանց միջեւ լրացուցիչ մրցախաղ անցկացվեց, որն ավարտվեց Աննա Զատոնսկիի հաղթանակով:

Տաքեւ Աբրահամյանն ու Կատերինե Ռոհանյանը 6 միավորով բաժանեցին 3-4-րդ տեղերը: Տաքեւն ավարտական տուրում անհաջող խաղաց՝ պարտվելով Թոմլինսոնին: Ավարտական տուրը հաջող էր Շուշանիկ Հայրապետյանի համար, որը հաղթելով Իրինա Զենյուկին, 2 միավորով 8-9-րդ տեղերը բաժանեց Եսթեր Էդելշտեյնի հետ:

Անհաջող նորամուտ

Գերծանր քաշային կարգում աշխարհի նախկին չեմպիոն, ամերիկացի բոքսիմարտիկ Կրիս Բերդի նորամուտը կիսածանր քաշային կարգում անհաջող էր: Լաս Վեգասում նա մենամարտեց իր հայրենակից, 29-ամյա Շոն Ջորջի հետ: Արդեն առաջին ռաունդում Ջորջին հաջողվեց մրցակցին նոկդաունի ենթարկել: Երկրորդ ռաունդում պատմությունը կրկնվեց: Ջորջի առավելությունը նկատելի էր, որի արդյունքում 9-րդ ռաունդում Բերդը երկու անգամ հայտնվեց ռինգի հատակին: Դրանից հետո մրցավարը դադարեցրեց մենամարտը եւ հաղթանակը շնորհեց Շոն Ջորջին:

Մենամարտից հետո հանդերձարանում բժիշկները ցավազրկող դեղահաբեր տվեցին Բերդին, որի հետեւանքով նա անսպասելիորեն կորցրեց գիտակցությունը: Բոքսիմարտիկին անմիջապես տեղափոխեցին հիվանդանոց, որտեղ բժիշկներին հաջողվեց ուշքի բերել Բերդին: Վերջինիս կինը եւ մենեջերը՝ Տրեյսին հայտարարել է, որ կոպիտ ծանուցման ավարտել ելույթները բոքսիմարտում:

Միխարեսը միավորեց տիտղոսները

Մեխիկական Դուրանգո քաղաքում երկու վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսը վիճարկեցին 52,2 կգ քաշային կարգում WBC-ի վարկածով չեմպիոնական գոտու տեր Քրիսթիան Միխարեսը եւ WBA-ի վարկածով ուժեղագույնը համարվող Ալեխանդր Մունյոսը: Հաղթողին որոշելու համար հարկ եղավ անցկացնել բոլոր 12 ռաունդները: Մրցավարները նախապատվությունը տվեցին Քրիսթիան Միխարեսին, որը մենամարտի վերջնամասում ավելի ակտիվ էր եւ լավ տեխնիկա ցուցադրեց: Նրանցից երկուսը հաղթանակը շնորհեցին Միխարեսին (116-111, 115-112), իսկ երրորդ մրցավարի կարծիքով հաղթել էր Մունյոսը (115-113):

Այսպիսով, Միխարեսը վերջին 10 տարիներին դարձավ 52,2 կգ քաշային կարգում առաջին բոքսիմարտիկը, որին հաջողվեց միավորել երկու վարկածներով աշխարհի չեմպիոնի տիտղոսները: Մինչ այդ, 1997-98-ին դա հաջողվել էր Ջոնի Տարիային:

Մեխիկացի անվանի բոքսիմարտիկ խորխե Արսեն իրավունք ստացավ Քրիսթիան Միխարեսի հետ վիճարկելու WBC-ի վարկածով առաջին թեթեւագույն քաշում աշխարհի չեմպիոնի տիտղոսը: Արսեն միավորներով պարտության մատնեց թաիլանդցի Դեւիդ Լուկմանակին:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ՄՐՑՈՒՅԹ

Համաշխարհային հայկական կոնգրեսը, Ռուսաստանի հայերի միությունը եւ Հայաստանի ժուռնալիստների միությունը հայտարարում են 2008 թ. ժուռնալիստական լավագույն հոդվածների մրցույթ՝

«Հայաստանը համայն հայերի հայրենիքն է» խորագրով

Մրցույթին ներկայացվող նյութերը պետք է արտացոլեն եւ իմաստավորեն պատմական վճռորոշ իրադարձությունները, հանգգային զարթոնքի բարունակականությունը, այն հիմնախնդիրները, որոնք ծառացած են ազգային երկու պետականությունների ամրապնդման ու հզորացման առի փուլում:

Մրցանակային ֆոնդը 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ է, որը հավասարապես կբաշխվի բոլոր անվանակարգերի միջեւ:

Սահմանվում են հետեւյալ անվանակարգերը.

1. Հայաստանի Հանրապետությունը ափխարհի համայն հայերի հայրենիքն է, հոյարտությունը:
2. Ազգային միասնականությունը՝ հայրենիքի հզորացման գրավական:
3. Սիրել Հայաստանով եւ Հայաստանի համար:
4. Ժողովուրդն է երկրի տերը, զինվորն ու մշակը:
5. Հոգեւոր հայրենիքի սահմանները:

Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի ժուռնալիստների միության այն անդամները, որոնց ստեղծագործությունները տպագրվել են մամուլում, հաղորդվել են ռադիոյով, հեռարձակվել հեռուսատեսությամբ:

Մրցույթի նյութերը ներկայացնել **մինչեւ 2009 թ. հունվարի 31-ը:**

Հասցեն.

375010 Երեւան, Պուշկինի 3ա, Հայաստանի ժուռնալիստների միություն

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱԾՁԲ-08/17 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ֆաղաֆաշինության նախարարության կարիքների համար Սյունիքի մարզային գյուղատնտեսական ժամկետային օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2000 ՀՀ դրամ փոխանցել «Հայքիզնեսբանկ» ՓԲԸ, «Հայջրնախագիծ ինստիտուտ» ՓԲԸ-ի N 1150000088680300 հաշվեհամարին եւ սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 8 աշխատանքային օրվա ընթացքում դիմել պատվիրատուին հետեւյալ հասցեով՝ ք.Երեւան, Կոմիտասի պ., 54/բ, հեռ. 28-93-25, հանձնաժողովի քարտուղար Գ. Մարկոսյանին:

Հրավերը անձին տվյալ է անձը հաստատող փաստաթղթի, իսկ կազմակերպության անունից հանդես գալու դեպքում՝ նաեւ անձի լիազորությունները հավաստող համապատասխան փաստաթղթի հիման վրա: Հայտերը պետք է ներկայացնել մինչեւ դրանց բացման պահը՝ մրցակցային բանակցությունների հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվանից հաշված 10-րդ աշխատանքային օրը, ժամը 12.30-ն:

***

«Պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ն (պատվիրատու) ՊԳԳ-ՄԲԱԾՁԲ-08/22 ծածկագրով կազմակերպում է մրցակցային բանակցություններ՝ **ՀՀ ֆաղաֆաշինության նախարարության կարիքների համար Գեղարքունիքի մարզի Վարդենիսի թիվ 2 միջնակարգ դպրոց կրթական օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով:** Հրավեր ստանալու համար անհրաժեշտ է 2500 ՀՀ դրամ փոխանցել «Հայ-

Հավելված 6
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2007 թվականի հուլիսի 10-ի թիվ 205 Ն որոշմամբ

ՍՊԱՍԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ֆինանսական արդյունքների մասին (ձեւ թիվ 6)
«31»-մայիս-2008թ.

Տոմարային միավոր

Բանկի անվանումը

(բանկի անվանումը եւ գտնվելու վայրը)

(Դրամ դրամով)

ԱՆՎԱՆՈՒՄԸ	Ծանոթագրություններ	Ընթացիկ միջանկյալ ժամանակաշրջան	Ընթացիկ ֆինանսական տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (անհրաժեշտության դեպքում)	Նախորդող ֆինանսական տարվա համապատասխան միջանկյալ ժամանակաշրջան	Նախորդող ֆինանսական տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվն ընկած ժամանակաշրջան (անհրաժեշտության դեպքում)
Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ	3	1217462		692251	
Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր	3	662387		343309	
Զուտ տոկոսային եւ նմանատիպ եկամուտ		555075	0	348942	0
Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով եկամուտներ	4	145343		216612	
Կոմիսիոն եւ այլ վճարների տեսքով ծախսեր	4	29004		23748	
Մեկնաբան զուտ կոմիսիոն եւ այլ վճարներ		116339	0	192864	0
Եկամուտ ածանցյալներից		0			
Զուտ եկամուտ արտարժույթի գործառություններից	5	333769		86214	
Այլ գործառնական եկամուտներ	6	15768		32187	
Գործառնական եկամուտներ		1020951	0	660007	0
Զուտ գործառնական ծախսեր (անձնակազմի հետ կապված ծախսերից զատ)	7	202914		518998	
Այլ գործառնական ծախսեր	8	503739		394163	
Գործառնական ծախսեր	9	145413		109998	
Գործառնական վնասը (շահույթը) մինչեւ հարկերը	10	0			
Շահույթահարկի գծով ծախս (գծերի հատկացում)		574713	0	675044	0
Շահույթը (վնասը) հարկերից հետո	11	115862		134242	
Հաշվեկշռային տարբերություններ, որոնք չեն դասակարգվում շահույթի կամ վնասի մեջ		458851	0	540802	0
Արտարժույթի փոխանակման գծով					
Գույքային բաժնետոմսերի գծով					
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող բացային շահույթ					
Մեկ բաժնետոմսին բաժին ընկնող նորացված շահույթ	12				
Ժամանակաշրջանի զուտ շահույթ	12				
Այլ բաղադրիչներ					
Մեկ կրկնակի հաշվարկման բաժնետոմս					
Փոխանակման բաժնետոմս					

Բանկի վարչության նախագահ Վ.Աթայան
(գլխավոր տնօրեն)
Գլխավոր հաշվապահ Գ.Գեղամյան

«Անի Տուր» պատմամշակութային տուրիստական գործակալությունը կազմակերպում է 7-ից 10-օրյա բարձրակարգ շրջագայություններ դեպի պատմական Հայաստան՝ նվիրված ամենթիկահայ մշակույթի գրող Վիլյամ Սարոյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Շրջագայության նամանակները բացի մեծ գրողի ծննդավայր **Բիթլիսից**, կայցելեն նաեւ **Կարս, Անի, Իգդիր, Բայազետ, Վան, Մուշ, Խնուս, Էջմիածին, Արտաշատ** քաղաքները:

Օգտվելք 20մ ընդլայնած եզակի հնարավորությունից եւ ծանոթացեք դարձեք մեր այս հիշարժան ուխտավորությունները:

Մանրամասների համար կարող եք այցելել մեզ հետեւյալ հասցեով՝
Երեւան,
Բաբեկյան 28, սենյակ 20.
Հեռ. (091) 203 206,
(094) 203 206:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունների գործարարներին եւ կազմակերպություններին

Սլովակիայի առեւտրային բանկերը Հայաստանի եւ Արցախի գործարարներին եւ կազմակերպություններին տրամադրում են բիզնես վարկեր՝ ՀՀ-ում եւ ԼՂՀ-ում գործող տոկոսադրույքներից էապես ցածր տոկոսներով:

Վարկի մարումը սկսվում է ձեռակերումից մեկ տարի անց: Մարման ժամկետը մինչեւ հինգ տարի:

Մանրամասն տեղեկությունների համար կարող եք զանգահարել 54-89-36, կամ (094)366-989 հեռախոսահամարներով:

ՏՐՎՈՒՄ Է ՎԱՐՁՈՎ

2 կից բնակարաններ Սայաթ-Նովա 3 շենքի առաջին հարկում՝ օդերայի հարեւանությամբ: Ընդհանուր մակերեսը 150 քմ. է, առաստաղի բարձրությունը 4.50մ է: Հարմար է օգտագործել որպես օֆիսային տարածք, ռեստորան կամ խանութ:

Մանրամասների համար կարող եք զանգահարել (094)36-69-89 հեռախոսահամարով:

Շահավետ պայմաններով պահանջվում են գովազդային մենեջերներ: Կարող են դիմել նաեւ ուսանողները:

Հեռ. 094-366989, 010 548936

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքացի սեփականության կառավարման գործակալության կողմից ՀՀ քաղաքացի ՍԵՆՍԱՊԻ եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջներին համաձայն, ծանուցվում է ՀՀ Արմավիրի մարզի Գայթաղ համայնքում հողի սեփականատեր **Սիրվարդ Միրզեկանյանի**՝ որոշման նպատակով սահմանվող (կոմունալ հողերից) քաղաքի սեփականից 15.0 լիտրի քաղաքի քաղաքացիության նախագծի:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ներկայանալ հետեւյալ ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքի սեփականության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2008 թ. մայիսի 30-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքի սեփականության կառավարման գործակալություն

ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության ՀՀ քաղաքի սեփականության կառավարման գործակալության կողմից ՀՀ քաղաքի տեսչության եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217 Ն եւ N 218-Ն որոշումների պահանջներին համաձայն, ծանուցվում է ՀՀ Վայոց Ձորի մարզի «Վարդ» ՍՕՀ-ին որոշման նպատակով, ծանրաբեռնված քաղաքի սեփականությունը, ինքնակամ 161.0 հա-55.0 լիտրի, Մատենադարանի 66.0-7.0 լիտրի, Ներ-Ներ հարեւանի 100.0 հա-23.0 լիտրի, Գնդեվազի 361.0 հա-42.5 լիտրի, Սյունիքի 20.0 հա-8.5 լիտրի, Մատենադարանի, Մեղրաձոր եւ «Վարդ հարեւանների» 83.0 հա-37.0 լիտրի եւ Գառնանի 102.0 հա-45.7 լիտրի հաշվեկշիռների քաղաքացիության նախագծերը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են ներկայանալ հետեւյալ ժամը 17-18-ը դիմել ՀՀ քաղաքի սեփականության կառավարման գործակալություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակությունից կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2008 թ. մայիսի 30-ին, ժամը 16-ին, Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

ՀՀ քաղաքի սեփականության կառավարման գործակալություն

Նորարար փորձառական արվեստի կենտրոնը

մայիս 27- հունիս 7-ը
ներկայացնում է

«Ժամանակակից փորձառություն»

10-րդ ամենամյա այլընտրանքային արվեստի փառատոնը

Համադրող՝ ***Դավիթ Կարեյան***

Բացումը՝ մայիս 27-ին, ժ.17-ին
Դիտման ժամերը՝ երկուշաբթի-ուրբաթ՝ 11:00-17:00
շաբաթ՝ 11:00-15:00

ՀՀ կենտրոնական բանկը տեղեկացնում է, որ արժութային շուկայում ձեւավորվել են հետեւյալ արտարժույթների միջին փոխարժեքներ. 22.05.2008 թ.

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Միջին փոխարժեք
USD	1	ԱՄՆ դոլար	308.83
EUR	1	ԵՎՐՈ	486.62
RUR	1	Ռուս. ռուբլի	13.09
GEL	1	Վրաց. լարի	213.13

www.azg.am

ՊՈՂՈՏԻ ՀԱՄԱՐ ՅԱՆԳՈՒՇԱՐԵԼ՝ 56-29-60

Լուսանկարները՝ «Ազգ» օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայական համար՝ 02 Ա N 047261, տրված՝ 17.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Նարեկ Աբեղյան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 22.05.2008, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում՝ Արգիշտիի 2: